

Իրաւորագրին կԱՆԻՍԻ Թուրքիոյ համար
տարեկան 50 դր, Ռուսիոյ համար 3 թուրքի
ուրիշ երկրներու համար 12 ֆր:
Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու-
թիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակագրոշմ
կ'ընդունուի 1 զրշնոցը 34 փարսյի հաշ-
ւով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ:
ԵԱՂԻԿ վերաբերեալ ամէն գործի համար
գիմել:

Առ Տնօրէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ
Պոլիս, Պաշէ-Գարու, Թաշ խան, քիւ 50

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Գ Ի Ր

درعليه ده بفتح قوسنده طاش خاندہ
•• نومروده « زاغيك » غزتهسى مديرى
بالا قاشيان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարս

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարս

Նոր Շրջան — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 12

ՇԱԲԱԹ

4 ՅՈՒՆԻՍԻԱՐ 1892

ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԵԱՂԻԿԻ Տնօրէնութիւնը պատիւ
ունի ծանուցանել իւր ընթերցողաց
թէ, գոհացումն տալու համար այն
խնդրանաց զորս յաճախ կ'ընդունի,
հաստատած է Յանձնակատարութեան
Գրասենեակ մը:

Յանձնակատարութեան Գրասենեակը
կը հայթայթէ մեծ և փոքր քանա-
կութեամբ ամէն տեսակ ապրանք
թէ՛ Պոլսոյ և թէ՛ եւրոպական հը-
րապարակներէն գնելի, ինչպէս,
գիրք ամէն լեզուաւ, պատկերք,
ձայնագրութիւնք, դպրոցական և
գրասենեակի պիտոյք, ժամացուցի,
տպարանական և այլ արհեստական
գործիք, կտակերէնք, ասուկէնք,
ըմպելիք, անուշահոտութիւնք, կահ
կարասիք, և այլն, և այլն:

Վճարմունք կանխիկ են, բայց ի
հարկին կարելի է պայմանաժամաւ
եւս գործել այն տանց հետ որ կըր-
նան արտագրիչներն ապահովել, Փո-
խադրութեան ծախք կը պատկանին
յաճախորդաց:

Յանձնակատարութեան Գրասենեակը
կ'ստանձնէ նաեւ վաճառումն ներ-
քին բերքերու թէ՛ Պոլսոյ և թէ՛ օ-
տար հրապարակաց վրայ: Առ այդ
կը բաւէ զրկել վաճառելի ապրա-
նաց նմուշները:

Յանձնակատարութեան Գրասենեակը
կը փախադի ունենալ թղթակիցներ
գաւառական քաղաքներու մէջ:

Թղթակցութիւնք պէտք է ուղ-
ղուին առ Թ. Գ. Փալաքաշեան, Կ.
Պոլիս, Պահչէ գարու, Թաշ խան,
թիւ 50:

PAPETERIES DE VIDALON

Թ Ղ Թ Ե Ղ Ի Ն Ա Յ

ՄԵԾ ԳՈՐԾԱՏՈՒՆ ՎԻՏԱԼՈՆԻ

Հիմնեալ 1597 ին ի Փարիզ, Բալէսթրօ փողոց, Թիւ 39



Դրամագլուխ 3,150 000 ֆրանք:

Կ'արտադրէ տարին 3,000,000 քիլօկրամէն անելի

Ներկայացուցիչ Հէնրի Ժարտօն, Պարնաթան խան

Գրասենեակի և տպագրական զանազան տեսակ ընտիր թուղթեր, գծագրու-
թեան թուղթ սպիտակ և զանազան գոյներով, ծծուն թուղթեր, զանազան
տեսակ ստուարաթղթեր (մուխավա), լուսանկարչական թուղթեր, մագաղա-
թանման թուղթեր, նամակաց պահարաններ, և այլն, և այլն:

«ԵԱՂԻԿ» կը տպագրուի Վիտալոնի գործատան մէջ պատրաստուած թուղթի
վրայ: — Մանրամասն տեղեկութեանց և յանձնարարութեանց համար դիմել
«ԵԱՂԻԿ» ի Խմբագրատունը:

8-10

FRATELLI GOLDENBERG

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ, ԱՄԵՆԷՆ ՀԻՆ, ԱՄԵՆԷՆ ՀԱՄԲԱՍԻՈՐ

ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱՅԱՆՈՐ ՀԱՄԱՅՆ ԵՒՐՈՊ. ԹՈՒՐԻՈՅ, ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԻՈՅ ԵՒ ԵԴԻՊՏՈՍԻ ՄԵՋ

ՖՐԱԹԵԼԼԻ ԿՈԼՏԵՆՊԵՐԿԻ

Այս վաճառատուն կը յանձնարարուի հասարակութեան և ամէն մրցման
կրնայ դիմադրել իւր կերպասուց ընտիր յատկութեամբ, պատրաստութեան
տոկունութեամբ, ինչպէս նաեւ հանդերձին գեղեցիկ կտրուածքով:

ԳԼԽԱՌՈՐ ՄԹԵՐԱՆՈՅՔ Ի Կ. ՊՈԼԻՍ

Թիւնէլի քով Թիւ 2, եւ Քարաքէօյի Կամուրջին գլուխը Թիւ 28

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄԷ

Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ Բ

Հոռոտս, Քալալա, Ռուսնուք, Զմիւռնիա, Վառնա, Պուրկաս, Փիլիպէ,
Բոր-Սաիտ, Սելանիկ, Սամսոն, Մերսին, Քիոս, Թարսուս, Ատանա, Պէրութ,
Դամասկոս, Տրիպոլիս (Սուրիական), Շաֆա, Աքեա, Ալեքսանտրիա, Գահիրէ,
և այլն, և այլն:



MAISON PHÉNIX

Բերա, Բասաժ տիւ Թիւնէլ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Շապկեղինաց, ձերմակեղինաց և Բրդեղինաց



Վաճառատունս կը յայտարարէ իւր բազմաթիւ յաճախորդաց թէ, Նանսիր և Բիւմպէրկի աշխարհածանօթ գործատուներէն ի նորոյ ստացած է մեծ քանակութեամբ՝ վերջին նորածեղութեանց համաձայն շինուած՝ արանց, կանանց և մանկանց համար պատրաստ հագուստեղէններ, օժիտի համար բազմատեսակ ձերմակեղէններ, կնուռքի համար մանկանց զգեստներ և այլ ամէն տեսակ ապրանքներ:

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ.

	Հատը	Ղրշ.
Շապկի կտաւեայ	14 էն 47 1/2	
» դուռնուոր տպածոյ	10 էն 28	
» Փանէլա	21 էն 42	
» Գիշերանոց	12 էն 27	
Անդրաւարտիկ	10 էն 21	
» մատամբօլ	15 էն 22	
Օձիք կտաւեայ	17 էն 54	
Թեւնոյ »	29 էն 65	
Թաշկինակ այլ և այլ տեսակ	14 էն 135	
Գուլպաներ՝ Փիւ տ'էքօս, բամպակեայ, մետաքսեայ, բրդեայ	29 էն 145	
Փողկաթ այլ և այլ տեսակ	3 էն 19	

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ.

	Հատը	Ղրշ.
Շապկի՝ լաւ տպածոյ, դիմացկուն, պրօտրիով	15 էն 27	
» » » տանթեւայով	18 էն 31	
Վարտիկ » » » »	14 էն 22	
Վարտիկ » » » պրօտրիով	11 էն 24	
Միսօ » » » »	20 էն 38	
» » » տանթեւայով	25 էն 65	
Քօրսէ՝ Բարիզի կուրտէ գործատան	26 էն 70	
Քօրսաժ լամպակեայ, մետաքսեայ	11 էն 26	
Փանէլա լաւագոյն տեսակէն	15 էն 40	

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ ամէն տեսակ զգեստեղէնք և ձերմակեղէնք:

	Ղրշ.
Սեղանի սփռոցներ գունաւոր՝ 6 անձեռնոցով	20 էն 39
» » գունաւոր 6 և 12 »	65 էն 145
Անկողնոյ ծածկոցք մէթրը	9 էն 17
Գուլպայ՝ Փիւ տ'էքօս, բրդեայ, բամպակեայ	40 էն 145
Կտաւ Վիշիի, մէթրը	3 էն 5
Սպիտակ տպածոյ՝ լաւագոյն տեսակէն	2 էն 5 1/2

ՆԵ ՈՒՐԻՉ ամէն տեսակ ապրանքներ

Յանձնարարութեանց համար պէտք է գրել «Մաղիկի» Յանձնակատարութեան Գրասենեակին:

4—52



ԼԱՎԸՆԻՌ ՏԷ ՓԱՄԻՅԼ

(Ընտանեաց ապագայն)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈՒԱԴԱՐՁ ԸՆԿ.

ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ԴՐԱՄԱԳԼԵՈՅ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Գաղղիոյ կառավարութեան

Կեդրոնատեղի՝ 61, Բէփրալիք փողոց,

Լիւն (Ֆրանսա)

Ապահովութեամբ Գրքեր 100,000 000 ֆր.

ԼՎԸՆԻՌ ՏԷ ՓԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, որ հաստատուած է նպատեւ լու համար փոքր խնայողութեանց, առաջ զարգացում մը ունեցած է: Իւր նպատակն է որոշեալ պայմանաւորման մէջ վերականգնել գրամագլուխն:

Ընկերութեան գործառնութիւնք բազմաթիւ են, ինչպէս շարժական արժէք և փոխ տրուած գրամագլխոց ապահովագրութիւն, կորուսեալ գրամագլխոյ մը վերականգնութիւն, երաշխաւորութիւնք և Գլխավճարք՝ փոխառութեանց և ճարտարութեանց և վաճառականութեան մէջ գործածուած զըրամագլխոց, մանկանց համար օժիտք, հանգստեան սնտուկ ծերութեան համար, ցկեանս եկամուտներու կազմութիւն, ի մի բան այն ամէն գործառնութիւնք որոց նպատակն է խնայողութիւն: Ընկերութեան Պոլսոյ գործակալութիւնն սկսած է 1884 Յունուար 1էն:

Տեղեկութեանց եւ բաժանորդագրութեան համար գրիմել առ Բարսեղ էֆէնտի թէլլալեան, գործակալ Ընկերութեան ի Կ. Պոլիս, Պահճէ—Գաբու, Շէյխ—Իսլամ խան, Թիւ 11:

ԶԷՆՕԲ ՄԵՐՃԱՆՃԵԱՆ

Պահլէ-գաբու, Համիտիէ ֆաս տէս, 58

Իքի գաբուլը դեղարանին դմաց

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՑ

Պատի, Գրպանի

Ոսկիէ, Արծաթէ եւ Նիքէլէ

ԳՈՅԱՐԵՂԵՆՔ

Ապարանջաններ, Պառններ, Օղեր, Մառաններ, Մետաղեօններ, և այլն:

Այս բոլոր ապրանքները բերուած են Եւրոպոյ լաւագոյն գործարաններէն, և իրենց ճաշակն, քրաթը և ընտրութիւնը կ'արդարացնեն այն համեմատարար համեստ գինն որով ի վաճառ հանուած են:

Փոքրաքանակ և մեծաքանակ

վաճառում

Վաճառատունը յանձն կ'առնու ամէն տեսակ նորոգումներ, ժամացոյցի և գոհարինաց յանձնարարութիւններ: Կրէ Դիւն-Ենի քը Զաքէ-Ենի: 5—5

Բաժանորդագիրն կԱՆՆԻՔի Թուրքիոյ համար տարեկան 50 զրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի, ուրիշ երկիրներու համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակադրով կ'ընդունուին՝ 1 զրշ նոցը 34 փարայի հաշուով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ:

ԵԱԿԻԿի վերաբերեալ ամէն գործի համար դիմել

Առ Տնօրէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Դ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ
Պալա, Պաշէ-Կապու, Թաշ Խան, Բիւ 50

ԾԱԴԻԿ

Լ Ր Ա Գ Ի Ր

درعليهده بفتح قوسنده طاش خاند
• ه نومروده « زايك » غزتهسى مديرى
بالا قاشيان حووان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50.
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 12

Շ Ա Բ Ա Թ

4 ՅՈՒՆԻՍԻԱՐ 1892

ՆՈՐ ՏԱՐԻ 1892 Յունուար 1

Քայլ մ'առ առաւ ժամանակը. տարին զնաց՝ և տարին եկաւ. թուանիշ քայլ մեր կենաց մէջ, աննիշ՝ տեւողութեան մէջ. սակայն այնպէս ուրուակերպ՝ որ ամբողջ տարւոյ մը անցքը եղաւ անզգայի. Կարծես երէկ էր Ամանոր, մինչ երէկ էր Ամսվերջ. նայնպէս պիտի լինի և ներկայս՝ յորում մտղթեմք բանաւոր կակին նուազ կորուստ քան յանցեալն: Սակայն ո՞ր կարէ պատմեմք մեզ թէ ինչպիսի դիւթական, ինչպիսի առաջօք իմն է ժամանակը... բայց միանգամայն ճշմարիտ Սուրհանդակ յաւիտենականութեան, ժամանակը... Անիւ անպարագիծ, որոյ աննշմարելի պտոյտը կեանքէ մահ՝ և մահէ կեանք, նշմարելի կ'ընեն բիւրք բիւրուց կայծիկը որ յակնթարթի կը վառին և նոյնչափ այլ՝ որ նոյնհետայն կը մարին: Գերազայն Հնձողի գերանդի, որոյ առջին նոյն են խոտի թեւ և կաղնիի բուն: Անյատակ բով, յորում տարրալուծին յաջորդաբար էն և Ձէն միահողոյն, և ուստի նոր իմն կ'արտադրի ընդ տիեզերս: Ի զուր մահացուաց ձեռքեր բարձրացուցեր են նորա ընթացից դէմ հաստագոյն բուրգեր, հաստատագոյն պատուարներ. նա չիբելով իսկ կը մաշէ զանոնք և կը փշթէ, ինչպէս աղի ալիք յար բախումբ մաշեն եղերաց խրոխտ վէմերը և փշթեն յաւազ, և մարդու աչքեր ոչ ևս զօրեն տեսանել ինչ անդ՝ ուր կար ամբողջ մը, աշխարհ մը: Այսպէս նախնի գոյից նշխարնք զարդիս են գաղ՝ յօդս, Ածուխ՝ ի կուղս լերանց, Ապաւառ՝ յանդս:

Թէ հողը խօսէր, թէ վէմը խօսէր, պիտի լսէինք, մէն մի քայլափոխի, ինչ պատմութիւններ: Բայց թէ մարդ խորհէր, խորհէր՝ երբ տեսնէր զեղնարակ

կիսափուտ մարդկային մի ոսկր, գանկի հողամած մի բեկոր որ գողցես հարցունէ Ուղեորին⁽¹⁾. — Գիտցի՛ր, թէ կարես, ո՞վ եղայ ես... Ձեռ կարող... Գիտցիր ուրեմն, սվ որ ալ ես, թէ քեզ ա՛լ չպիտի ճանչնան, ինձ նման աւա՛րդ մահու, երբ լինիս ինձ պէս աւեր:

Բայց ի՞նչ օգուտ թէ խորհինք և տխրինք. մեր հոգ օրհասի հողը չէ. գուցէ առ թաղմութեան աւելի չուտ հրաւիրենք զանի մեր վրայ, այն զի նա կից իսկ է մեզ. ինչպէս Սաուերը՝ լուսնիկալ մարմնոց, ինչպէս Բուենը⁽²⁾՝ ծանրացեալ աչքերու: Այո՛, անխուսելի է նա. ապա պէտք է դադարի փտանք լինելէ, քանի որ հարկ մի է: Խորհինք ուրեմն միայն թէ ինչպէս անկ է մեզ այդ հարկը վճարել: Չտրամինք այլ ևս, այո՛, չտրամինք. ուրախ լինիմք մահաւանդ՝ զուարթ ծաղկանց պէս՝ որ հեղեղատի եզրը կը պճնեն ի լեռնոտն, վայրեվարդից փշուտ թուփերու պէս՝ որ սարաւանդից կատարը կը պսակեն. մայրաւորաց լուսաւոյ ծառերու պէս զաւրթափի վրայ՝ ուր այնչափ հաճելի է վատտակաբեկ փայտահատին հանգիստ առնուլ յեց ի տապար: Ուրախ լինիմք թեւաւոր սիրուն հիւրերու պէս՝ որ կուգան առ մեզ, կ'երգեն ու կ'երթան, և որոց հետք ոչ մնան յօդս: Ուրախ լինիմք ի բնութեան. բայց լըսեմք իմաստուն բնութեան որ ներէ մեզ շնչել տակաւին կենաց տարրը, և

(1) Առ իմ նմանիս,
Ուղեորին ի պանդոկէ չիք ինչ իւր.
Ապա զի՞նչ մեր... Աշխարհս պանդոկ՝
և մեք հիւր:

(2) Առ քունն:
Մօր կաթի խառն սրբանի մեղր, կենաց առջի քաղցրութիւն.
Խոնջ անդամաց դու կաղքուրիչ, ի կեանս
մահու վարժութիւն.
Հարուստ՝ աղքատ ի մօռացոնս, քե են
միմեանց հաւասար.
Թէ խլճի խայթ զքեզ չի խուլի՛ դո՛ւ
մեր վերջին միտքար:
Նոյն

որ կ'ըսէ մեզ. «Վայելէ զիս, ուրախ եղիր, երջանիկ եղիր ինձմով, տալով՝ ըստ կարի՝ վայելա, ուրախութիւն և երջանկութիւն քո նմանեաց:

Այսպէս, իցի՛ւ, Սիրելի ընթերցող, ուրախ ապրիս տարի մի ևս, և չառ տարիներ՝ օգտակար հանգիստանալով անձինդ և նմանեաց: Յ. ՈՍԿԱՆ

ԱՊԱԳԱՅԻՆ ՀԱՄԱՐ

Ողբացեալ Հ. Սերովրէ վարդապետ Տէրվիշեանի յուղարկաւորութեան նըկարագրութեան մէջ օրաթերթք միաբանութեամբ գրած են թէ «սառուար բազմութիւն մը և գրագէտ դասն ներկայ էին»... Ո՞վ թշուառութեանս. «գրագէտ դաս» էն մի միայն ներկայ էր Կարապետ Էֆ. Գարագաշ, որ մինչեւ դերեզմանատուն ընկերացաւ դադարին. անկէ դաս ոչ ոք կար դըժբաղդաբար⁽¹⁾: Ո՞չ ողբացելոյն դատախօսած վարժարաններն եկած էին վերջին յարգանք մը մասնուցանելու իրենց վարժապետին, և ո՞չ հարկ եղած պատիւն ըրին գրագէտք իրենց պաշտօնակցին: Կ'ամուշեմ գրելու թէ իրենց հոգի հազիւ ներկայ էր հանդիսին, — անշուշտ դպրոցական հանդէս և կամ թատերական ներկայացումն չլինելուն համար, — և այն ալ զիտէ՞ր որո՞նք էին. — իւր դրացիներն և մի քանի մօտակայ բարեկամներ, որք եկած էին լոկ բարեպաշտական պարտականութենէ մղեալ, և կամ՝ իրրեւ բարեկամ պատուելու համար: Պարոնեանին և Աղամեանին այսպէս չըրինք. Ռուսահայք այսպէս չեն ըներ իրենց գրագէտներուն. այսպէս կը վայելէ ընել հանրածանօթ Լեզուաբանի մը, որ ամէն տեղ կը հասնէր. ահա՛ մեր ապերախտութիւնն, ահա՛ մեր աշխատաւորաց վախճանն: Կ. Յ. Գ.

(1) Մամուլն ունէր իւր ներկայացուցիչներն:

Հ Ի Ն Ձ Ե Ռ Ա Գ Ի Ր Ք

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ԵԿԵԼԵՑԻՈՅՆ

ԿԵՍԱՐԻՈՅ

20. ՅԱՅՄԱՐԱՌԻՐՔ

Թուղթ 524 կամ 1048 էջը: Մեծութիւն, 38.5×25.5 հարկերորդամէթր: Կազմ, հին արեւելեան, տախտակեայ կաշէպատ: Երկու արտաքին երեսներն հնգական տեղերէն գամուած են պղնձեայ հինգ գամերով: Նիւթ, թուղթ, մաքուր և ուղղակի: Գիր, բոլորագիր մաքուր գրուած և սեւ մեկն: Գրութիւն, երկսիւնակ: Տողք, 38: Հանգամանք, բաւական մաքուր պահուած է: Թուղթեր, են ամէնօրեայ յայտնաւորաց սկզբնագրերն և ուղղակի տողն կարմրաւ: Եզերագարդ՝ ամէնօրեայ յայտնաւորաց լուսանցքը, լաւ նկարուած են: Յիշատակագրութիւնք, ա) ամէն յայտնաւորաց վերջն, և բ) թղ. 524 բ: Ժամանակ, ՌՃԼԲ (=1683): Գրիչ, Յովսէփ Երէց: Տէր, Տէր Մինաս: Տեղի, Կեսարիա ի գիւղաքաղաքն Հիւսիսայ:

Մատենան է Յայտնաւորք:

Բաց ի գրութեանց ընդարձակութեանէ կամ համառոտութենէ, կարգերն համեմատէ թիւ 19 Յայտնաւորքին հետ:

Յիշատակագրութիւնք.

1. (Ամէնօրեայ յայտնաւորաց վերջն). «Ստացողի գրոցս Տէր Մինասին և ծնողացն Կարապէտին և Շար խաթունին, և կողակցին Մարգրիտին, և եղբարցն Յակոբին և Աբրահամին, և քրքերն Աննային, և մեղապարտ գրչիս, և կարգացողաց և լսողաց:»

2. Թղ. 524 բ, (Գլխաւոր յիշատակարան). «Փառք... Արդ՝ գրեցաւ սա «ձեռամբ մեղապարտ և անարժան և անպիտան և ինչուն գրչի Յովսէփ Երէց «անցաւորի, ի Թուականութեանս Հայոց «ՌՃԼԲ (=1683) ամին, ի Մայրաքաղաքն «Կեսարիա, ի Գիւղաքաղաքն որ կոչի «Յեքաւայ, ի դուռն Սրբոյն Ստեփանն «նոսի նախավային և Սրբոյն Սարգսի «և Սրբոյն Գէորգայ զօրավարացն, և «այլ համօրէն աստ հաւաքեալ սրբոցն: «Արդ, գրեցաւ լուսազարդ Մատենան «Ածային որ կը կոչի Յայտնաւորք, ի «լաւ և յընտիր օրինակէ, զոր առեալ «զնոյն օրինակեցի զսա, ի Հայրապետ «տութեան Տեառն Եղիազար Կաթողիկոս «կոսին ամենայն Հայոց և ի յԱռաջ «նորդութեան այսմ նահանգիս Գրիգոր «քաջ Բարուհապետին և Արհիեպիսկոս «սոսին և Ածաբան Վրդպի: Արդ ա- «ղաչեմ զամենայն դասս Քահանայից

«որք հանգիսիք յայսմ լուսազարդ Մա- «տենիս, յիշեալիք ի մաքրափայլ յաղո- «թըս ձեր զվերոյգրեալ զՅովսէփ Ե- «րէցս և զարքանունդ զՏէր Մինասն և «զամենայն արեան մերձաւորսն: Դար- «ձեալ յիշեալիք ի մաքրափայլ յաղոթս «ձեր զՏէր Ներսէս Վրդպն որ բազում «աշխատութեամբ ուսոյց արուեստն «նօտարութեան ինձ անարժանիս Յով- «սէփայ: Դարձեալ աղաչեմ յիշել ի յա- «ղոթս ձեր զանարժան և զանիմաստ «գրիչս և զծնողն իմ Դրիգորն և զմայրն «իմ Հեղինէ...: Ո՛ր ոք կարգայք կամ «օրինակէք, մեղաց թողութիւն խնդրի- «ցէք ի Քսէ Այ, մերոյ, զի և դուք «գտնիք ողորմութիւն յամենառատ «սրբազանդէն Քի Այ, և որ յիշէ յիշ- «եալ լիցի ահեղ ատենին Քի, ամէն: «Հայր մեր որ յերկ...: Յիշատակ է «Յայտնաւորքս ի դուռն Ս. Ածածնայ. «(Այլ գրիչ) Կեսարեա որ է Մոծակ և «չունի ո՛ք իշխանութիւն հանել զսա ի «դրանէ Ս. Տաճարիս, և թէ ո՛ք յան- «դըքնի, մասն և բաժին զՅուդայի և «զխաչահանուացն առցէ, և խնամով «պահողքն աւրհնին յԱյ և յամենայն «սրբոց նորա:»

21. ՅԱՅՄԱՐԱՌԻՐՔ

Թուղթ, 502 կամ 1004 էջը: Մեծութիւն, 38×25 հարկերորդամէթր: Կազմ, հին արեւելեան, տախտակեայ կաշէպատ: Նիւթ, թուղթ, պինդ և անողորկ: Գիր, բոլորագիր, միջին մաքրութեամբ: Գրութիւն, երկսիւնակ: Տողք 37: Թուղթեր, զարդագիրք, եզերագարդ, ամէնօրեայ յայտնաւորաց ըսկիզբներն: Վերնագիրք և Գլխագիրք, են կարմիր մեկնաւ: Յիշատակագրութիւնք, ա) Ամէնօրեայ յայտնաւորաց վերջն, և բ) թղ. 502: Գրիչ, Տէր և Տեղի, անծանօթ: Ժամանակ, վերջին կապի՝ ՌԾԹ (=1610)

Յիշատակագրութիւնք

1. (Յայտնաւորաց վերջն). «Որ ո- «ղորմի ստացողի գրոցս Պաղպանին, «և ծնողաց նորին Քոչակին և մարն «Զինէ և ընտանեացն Թուրվանին, Ախ- «լուին, Սեանգարին, Թագունին, «Ղայային և կարգացողաց, ևն:»

2. Թղ. 502 ա. (Յիշատակարան), «Փառք... Արդ. կապեցաւ վերջին կա- «պըս ի քաղաքն Կեսարիա ի դուռն «Սր. Ածածնին և Սր. Սարգսի զինաւո- «րին և որդւոյն նորա Մարտիրոսին, և «Սր. Մեակերիոսի զինաւորին և այլ բա- «զում հաւաքեալ Սրբոցն. ի թվին ՌԾԹ «(=1610), ձեռամբ եղկելի և թշուա- «ռական գերոյս սուտ անուն... Քա- «հանայիս որ եմ մեղաւք ապականեալ, «Եւ աղաչեմ զամենեսեանդ, որ լի բե-

«րանով Ած ողորմի տալք, Խօնայ Պաղ- «պանին որ ըստացաւ զայս ճառս Մար- «տիրոսաց ի հալալ ընչից իւրոց և ե- «դեր յիշատակ ի Դուռն Սր. Ածածած- «նին յիշատակ իւր և հաւրն Քոչակին, «և մարն Զինէ, և կողակցին նորա «Ախլուին և Թուրվանին, և որդւոյն «... Սեանգարին և առ Ած իմեալ... «Սուլթան Լալային և դատերաց նորին «և ամենայն արեան մերձաւորացն, «հաւասար կարգացողաց և լսողաց և «որ ասեն Ած ողորմի:»

3. Թղ. 502 ա. (Այլ գրիչ Եօսրագիր), «Այս եղեւ ՌՄԼԵ (=1786) ամին ի Մար- «տի իշ. Ես անպիտանս Ամանօղլուեց «իբրը տիրացու Մըհմըտիչ ըսկընեցի, «ով որ այսքմ գիրքս կարգայ, կամ ի «հանգիսիք, յիշեցէք միով հարմեղա- «յիւ ըզնընջեցեալքն մեր և դուք յիշ- «եալ լինիցիք ի Այ մերմէ, ամէն:»

22. ՅԱՅՄԱՐԱՌԻՐՔ

Կազմ, արեւելեան, տախտակեայ կաշէպատ: Նիւթ, թուղթ, պինդ և անողորկ: Գիր, բոլորագիր, մաքուր և սեւ մեկն: Գրութիւն, երկսիւնակ: Խո- «րանք, թուղթ 3: Թուղթեր, զարդագիրք, եզերագարդ, են ամէնօրեայ յայտնաւորաց սկիզբներն: Վերնագիրք և Գլխագիրք՝ են կարմիր մեկն: Յիշատակագրութիւնք (Գլխաւոր) չի:»

Տեղեկութիւն. — Մատենիս առաջին կազմն քայքայուած և վերջին կազմի ժամանակ ալ երկու հատորի բաժնուե- «լով թղթերն ալ խառն ի խոռն գրուած են, որով չփոթուած են օրերն և տե- «ղերն, մանաւանդ այս վերջին երկրորդ կազմն ալ գրեթէ քայքայեալ վրայ է: — Վերջ Ձեռագրաց Ս. Ածածնայ Եկեղեցւոյն Կեսարիոյ:»

Ծանօթութիւն: — Այս օրերս մեր ձեռքն հասաւ ՁԽԵ (1296) թուականին Սիւլուայի վանուց մէջ Տ. Պետրոս Քա- «հանայի մը ձեռք գրուած ձեռագիր մը, «Մարգարէութիւն Նապեայ եւ թուղթ Պաղպանի:» Ձեռագրիս մէջ Առաքելոյն թղթոց կարգին կը գտնուի՝ Կոնքաց- «ւոց առ Պաղպան եւ Պաղպան առ Կո- «րնքացւոց» գրած Գ. թուղթն, զոր Եւրոպացի բանասէրք անվաւերական կը համարին: Ձեռագրիս վրայ մանրամասն տեղեկութիւնքն և Պաղպանի Գ. թղթոյն բնագիրն ի մօտոյ կը զրկեմք Ձեղ ի հը- «րատարակութիւն: Նաեւ պիտի շարու- «նակեմք գրեւ Կեսարիոյ Ս. Սարգիս Ե- «կեղեցւոյ գանձատան մէջ պահուած գրչագրաց վրայ:»

ՏՐԴԱՏ ՎԱՐԴ. ՊԱԼԵԱՆ

1891 Դեկտ. 17

Կեսարիա



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

ԳՐԱԳԱՏՈՒԹՅՈՒՆ (1)

Արխիսակէս Եպիսկոպոս Սեդրակեանի

«Ամուսնական Խնդիրներ» գրքին

վրայ,

Ի Թիբեկ Միսաք Արամեանէ

Դ.

Սակայն դիցուք թէ Կ. Պոլսոյ եկեղեցականաց կարծեցեալ մտադրութիւնը իրադրութեանցաւ, Հայրապետական Աթոռը կատարեց նոցա առաջարկութիւնը, եկեղեցական ընդհանուր ժողովը գումարուեցաւ և եկեղեցւոյ ամուսնութեան համար՝ «Հին, փոսած, խել մը անտանելի օրէնքներ» ու տեղ խմբագրուեցան նորերը՝ համապատասխան ժամանակի պահանջից, և վաւերացան։ Բայց չէ՞ որ եկեղեցական ժողովը՝ որպէս եկեղեցական, այսինքն քրիստոնէական հիմնարկութեան ժողով, ամենեւին կարող չէ նշանակեցի չափով անգամ չեղիլ այն սկզբունքներէն որոնք, որպէս յայտնական թեւադրութիւններ, գերադոյն հեղինակութիւն ունին։ Չէ՞ որ Հայաստանեայց եկեղեցին ամենից առաջ աւանդապահ է։— Ըստ ոգւոյ և ըստ վարդապետութեան առաքելական եկեղեցւոյ՝ եկեղեցական ժողովը կարող է վերահաստատել, վերանորոգել և կարգաւորել սղծութեան ու անփութութեան պատճառաւ եկեղեցւոյ խախտուած, խանգարուած, չփութուած կանոնները, բայց ոչ բարեփոխել, որովհետեւ բարեփոխութիւնն անհնար է առանց նոր սկզբանց ներմուծման, իսկ նոր սկզբանց վրայ խմբագրուած օրէնքները սահմանադրուած կանոնաց խախտումն են, որ ի հարկէ անհնար է ընդունիլ՝ առանց եղծելու եկեղեցւոյ դաւանաբանական և բարոյական ուսման ճշմարտութիւնները։ Այս է պատճառը, որ եթէ այդ ժողովոց մէջ կարելի է աւարկութիւն ընել եկեղեցւոյ ամուսնական օրինաց մասին, — կարելի է ընել այն միակ նպատակով որ՝ խմբագրութեան օրէնքներն՝ արդէն ժողովներով որոշուած և աւանդութեամբ մեզ հասած հիմնական կանոնաց վերահաստատութիւնը լինին, և խանգարուած լինող վերանորոգութիւնը՝ սկզբնական կազապարով։ Զայս ցոյց կուտայ մեզ եկեղեցական ժողովոց պատմութիւնը, մանաւանդ Հայաստանեայց եկեղեցւոյ ժողովոց պատմութիւնը։ Նւայլապէս ալ չէր կարելի, քանի որ եկեղեցին, որպէս ռոյ յաշխարհէ աստի

հիմնարկութիւն», կամ ըստ Օգոստինոսի Civitate Dei, իւր օրէնսդրական և առհասարակ, իւր գործունէութեան բոլոր ոլորտներու մէջ կը ղեկավարուի իմաստութեան հնութեամբ, արտահանելով իւր գանձերէն «Ձենոյ Հինն և զհինն երեսաց նորոյն»։ Գոնէ այսպէս կը վարդապետէ կանոնական իրաւագիտութիւնը՝ համալսարանի ամբիօնէն։⁽¹⁾

Գուցէ այս բանը խիստ թուի հեթանոսամիտ լուսաւորեալներուն և լուսաւորեալ հեթանոսներուն, սակայն քանի որ եկեղեցին՝ ի գոյթակցութիւն Հրէից և ի յիմարութիւն հեթանոսաց՝

(1) «Ուղղափառ եկեղեցւոյ կանոնադրութիւնը միմիայն Հին կեանքի արտադրութիւն չէ, կ'ըսէ պրոֆ. Տաշկարէս իւր դասախօսութիւններու ներածութեան մէջ, այլ հին դիտութեան արդասիք է... Միմիայն այս սկզբանց և հայեցողութեան տեսակէտով կարելի է պատշաճօրէն ըմբռնել եկեղեցւոյ իրաւագիտութեան սահմանները, Համապատասխան այս տեսակէտին, եթէ ուղղափառ եկեղեցւոյ իրաւագիտութիւնը կը կամենայ արժանի լինել իւր անուան, պարտաւոր է քիչ թէ շատ չեղիլ ներկայիս մէջ իշխող իրաւագիտական սկզբունքներէն և հայեցողութեան և տանիլ զմեզ Հին աշխարհի հայեացքներուն և սկզբանց... Եկեղեցական իրաւագիտութիւնը պիտի կարողանայ արտահանել իւր գանձերէն «Ձենոյ Հինն և զհինն երեսաց նորոյն»։ Իմաստութեան հնութիւնը որ այնքան մեծ կարեւորութիւն ունի կրօնի մէջ, պակաս կարեւոր չէ՝ առհասարակ և ընկերական յարաբերութեանց մէջ։ Անշուշտ Հին Յունաց այս տկար կողմը կ'ուզէր նշմարել տալ եղիպտացի քուրմը, երբ դարձել էր Աթենացւոց երեւելի օրէնսդրին այս խօսքերով. «Ո՛վ Սոկրատէս, Սոկրատէս. դուք յոյներդ մշտակայ մանուկներ էք. չկայ ձեր մէջ աւելորդ, ձեր հոգին միշտ պատանեկան է. չկայ ձեր մէջ հին հաւատը՝ հիմնուած հեթանոսական յիշատակաց վրայ. չկայ զիտութիւն՝ աւելորդած ժամանակի տիրութիւն» (Տրամախօսութիւնք Պլատոնի «Տիմէոս»)։ Բազմադարեան դոյութիւնը, ներքին կեանքի հիմանց ամբողջութիւնը, արտաքին քաղաքական հզօրութիւնը միշտ բաժին են եղել այն ժողովրդոց որոնք միացուցած էին երկրորդական աշխարհը ծերութեան իմաստութեան հետ, և ներկայի թեւադրութիւնները կ'ստուգէին անցեալ դարերու փորձերով։ Այս հանգամանքը՝ որպէս մի առանձին բարիք՝ Մովսէս կանխօրէն նշմարել էր սուսել Հրէից ազգին, երբ ի թիւս աստուածային օրհնութեանց կը յայտնէր և այն, թէ Իսրայէլը պահելով Հինը և Հնոյ Հինը, նորն ալ պիտի միացնէ Հին հետ (Գեո. Ժ. 10)։ Նոյն իսկ այն իրողութեան վրայ հիմնուած են քաղաքակրթութեան և առհասարակ գիտութեան միացումն արդիւնները, որ յետագայ սերունդները կը գնան նախկին սերնդոց շուրջը և ի նախնեաց ժառանգած վատտակը կը լրացնեն իրենց փորձերով։

Համարձակօրէն կը քարոզէ թէ «Մեք ո՛չ եթէ զհոգի աշխարհիս առաք, այլ և զհոգին որ յԱստուծոյ», այդ պատճառով նորա տրամախօսութիւնը կարող է խիստ ու խրթին համարուիլ աշխարհագրէ մոքերու համար։ Այդ հոգին պէտք է ունենանք, կրենք և զգանք որ հասկանալի լինի մեզ եկեղեցւոյ վարդապետութեան լեզուն, որովհետեւ «Ոչ թէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեան բանից, այլ վարդապետութեամբ Հոգւոյն զհոգւորս ընդ հոգեւորս համեմատէ»։

Շատ զարմանալի է մեր «յառաջադիմականաց» պահանջը եկեղեցւոյ ամուսնական օրինաց փոփոխութեան մասին և նոցա առարկութիւնը, իբր թէ այդ օրէնքները այլ ևս անտանելի են և անհամապատասխան ընկերական պահանջից։ Մեզ անհասկանալի է թէ ի՞նչու այդ օրէնքները խաւարի բռնութեան հալածանաց դարերու մէջ տանելի էին, ընկերական կեանքի պահանջից համապատասխան, իսկ այժմ, երբ գիտութիւնը լուսաւորել է մեր միտքը, վարթեցուցել է մեր գիտակցութիւնը, այս բոլոր բարիքներու վայելման մէջ յանկարծ այդ օրէնքները անտանելի կը քարոզուին։ Եթէ ասեմք թէ դժբախտաբար դարերու արդիւնք էին, կը ասեմք։ Եթէ ասեմք թէ այդ օրէնքները կը կաշկանդէին մարդկային անհատական ազատութիւնը, նոյնպէս կը սխալինք։ Դժբախտաբար կը ընդունուէն քրիստոնէական կեանքի մէջ տակաւին այն ժամանակ, երբ մարդկային մտքին մէջ՝ իմաստասիրական, կենցաղավարական և բարոյագիտական խնդրոց վերաբերմամբ՝ ըյսն արձակ բացուած դռնով ել ու մուտ ունէր։ Եկեղեցին մեզաւոր չէ որ նորա առջև բացուած դռնը նեղ է, և ճանապարհը՝ անձուկ։ Հազիւ թէ եկեղեցւոյ ամուսնական օրէնքները նշաւակողներէն մէկը կարող է մեզ հիմնաւոր փաստերով ապացուցանել թէ ինչ որ այսօր անտանելի կը համարուի և ժամանակի պահանջից անհամապատասխան ի սկզբան տանելի էր և համապատասխան։ Օրէնքն՝ որպէս օրէնք՝ ծանր է, որովհետեւ կը խոնարհեցնէ կամքը, անտանելի է այն ժամանակ, երբ յօժարակամութիւն չկայ։ Այդպէս ալ եկեղեցւոյ օրէնքները, և ի մասնաւորի ամուսնական օրէնքները միշտ անտանելի են համարուած և կը համարուին, երբ բացակայ է յօժարակամ հնազանդութիւնը այն դերագոյն կամքին որ հաստատուել է ամուսնութիւնը, օրհնելով որպէս անբաժան միութիւն առն և կընող, և պատուիրել է. «Մարդ ոք՝ մարդ առ ամենայն ընտանութիւն»։

(1) Շար. «Մարդկային նախորդութիւն»։

մարմնոյ իւրոյ մի մերձեցնի յայտնել զառականս նորա, զի ես եմ Տէր» :

Այս դիտողութիւններէն յետոյ կարծեմ մեր ընթերցողաց համար հասկանալի պիտի լինի, թէ որքան օտար է եկեղեցւոյ ուսման ոգւոյն և պատմական վկայութեանց՝ այն վարդապետութիւնը, որպէս թէ եկեղեցւոյ օրէնքներն ալ արտաքին պայմանաց և մտածմանց եղանակի փոփոխութեան համեմատ փոփոխելի են, և որպէս թէ փոփոխութեան օրինաց կարեւորութիւնը չնշմարելը եկեղեցւոյ հաստատութիւնը կը վտանգէ: Ինչպէս տեսանք, եկեղեցին իւր օրէնսդրական գործողութեան մէջ որքան ալ ազատ լինի, դարձեալ զաշխարհուած է այն սկզբունքներով, որ նորա օրինաց ու կանոնաց հիմքն են: Այս մասին եթէ մի որ և է տարակոյս մնացած է, զայն փարատելու համար մտարեք թէ այդ տեսակ խնդրոց լուծման եղանակի և ուղղութեան մասին ի՞նչ կարծիք յայտնած է մի հեղինակաւոր ատեան, ինչպէս Ռուսիոյ հզօր կայսերութեան պետական խորհուրդը: Թէ և եկեղեցւոյ ընթացիկ գործոց վերաբերմամբ նոր կարգադրութեանց հրատարակութիւնը հակառակ չէ նորա մէջ հաստատուած կարգի հիմնական սկզբանց և նուիրական աւանդութեանց, բայց որովհետեւ օրէնսդրական ամէն մի ձեռնարկութիւն՝ հոգեւոր վարչութեան և դատաստանի որ մասին ալ որ պատկանի՝ պարտ է ըստ ոգւոյ և ըստ կուրծեան համաձայն լինել եկեղեցւոյ հնաւանդ ընդհանրական կանոնադրութեանց, որոնք միշտ պարտին պահել իրենց պարտաւորիչ գործութիւնը, ուստի ի հետեւումս սորա՝ անհրաժեշտ է որ զգուշութեամբ դատողութիւն արուի ամէն տեսակ նոր մուծանքի միջոցներու մասին, որոնք այս ու այն կողմէն՝ կը վերաբերին հոգեւոր վարչութեան և դատաստանին և առհասարակ եկեղեցական օրէնսդրութեան: Այս հեղինակաւոր դատողութեան յետոյ կարծեմք անտարակուսելի է, որ եկեղեցւոյ ամուսնական կանոնները կարող չեն «հին, փտած, խել մը անտանելի օրէնքներ» լինել, որ արդարացի և բանաւոր համարուի ամուսնական նոր օրինաց խումբադրութիւնը պահանջողներու փառտարանութիւնը: Շատ մոլոր է այն վարդապետութիւնը որ բացարձակ նշանակութիւն կուտայ «Շաբաթ վասն մարդոյ եղև» խորհրդաւոր խօսքին: Եթէ ընդունինք զայն որպէս դրութիւն և ո՛չ բացառութիւն, հարկաւոր է նաև ընդունիլ պունկութեան ներու՝ մը որպէս դրութիւն, որովհետեւ Շաբաթի սրբութիւնը խանգարողին նե-

րողը, ներեց և է. պատուիրանը հետողին: Այս կերպով կարող էին տրամաբանել միմիայն նոքա որոց բարոյական վարդապետութեան նմուշը արդէն ցոյց տուինք:

Եկեղեցին մերժելով մերժած է այդ վարդապետութիւնը. եթէ եկեղեցին զիջել է մարդկային տկարութեան, նա զիջել է մեղաւոր մարդին և ոչ մեղքին: Եթէ այժմ արտունջ կայ եկեղեցւոյ ամուսնական օրինաց մասին, այդ տըրտունջը ճշմարիտ որ արդար է և իրաւացի, բայց ոչ այն մոլորով, որպէս թէ անոնք «հին, փտած, խել մը անտանելի օրէնքներ» են. քա՛ւ լիցի. եկեղեցին այդ օրէնքներէն մի նշանախեցի չափով անգամ չէ կարող շեղիլ, որովհետեւ անոնք իւր պաշտած խորհուրդի էական մասերն են. արտունջը իրաւացի է այն մոլորով, որ արդարեւ այդ օրինաց կիրառութեան եղանակը կը ներկայացնէ աններելի օրինազանցութեան և անլուր գայթակղութեան աշխարհահանդէս: Ճշմարիտ է որ այս բանը մեր եկեղեցականութիւնը իւր լրութեան մէջ փորձով կը տեսնէ ամէն օր և իմաստութիւն կը համարի չարիքին դարման փնտռել: Բայց ի՞նչ կերպով: Եթէ Սեդրակեան Սրբազանը սովորութիւն ունենար իրողութիւնները վաւերական աղբիւրներէ ստուգելու, նա մեզ կը յայտնէր որ Կ. Պոլսոյ եկեղեցականութիւնը իմաստութիւն կը համարի ամուսնական կեանքի խանգարմունքէն յառաջացած չարիքի դարման փնտռել՝ ոչ թէ եկեղեցւոյ ամուսնական օրէնքները բարեփոխելով, ինչպէս Հայկալին էր գրել, այլ՝ այդ օրէնքները կարգաւորելով, ինչպէս կը հաղորդէ հանրածանօթ Մկրեան Արք. տէր Յովհաննէս Աւագ քահանայն, որ որպէս վկայեալ կանոնադէտ Կ. Պոլսոյ եկեղեցականաց մէջ, կը մասնակցի այն յանձնաժողովին որ կազմուած է ամուսնական գործոց քննութեան համար: (2)

(Շարունակելի)

(2) Ամուսնական խնդրոց քննութեամբ զբաղելու համար ի Կ. Պոլիս կազմուած եկեղեցականաց յանձնաժողովը բոլորովին ուրիշ բան է: Պոլսոյ Պատրիարքարանի հոգը ծանրացնող պատճառներէ եթէ չստենք առաջինը, գոնէ առաջնակարգ տեղ ունեցողը՝ ամուսնական վէճերն են: Բայց շատ կը սխալինք, եթէ այդ վէճերու մասին դատենք՝ մեր հոգեւոր ատեաններու իրաւասութեան ենթարկուած խնդիրներու համաձայն: Որովհետեւ ի թիւրքիս ընտանեկան իրաւանց ամբողջութիւնը ենթարկուած է Պատրիարքի իրաւասութեան, այդ պատճառով նորա դատաստանին կ'ենթարկուին այն ամէն վէճերը, որոնք մարմնաւոր բնոյթ ունենալով, մեր երկրի մէջ կ'ենթար-



Երբ քառասուն ձրմեռներ Դան պաշարել եմ ճակատ, Լե բանան խոր կրննիւնե Դեղեցկութեանդ այդ ի դատ, Դիրգ հասակիդ այս օրուան ձոյս պանուանմ ասազմայլ Պիսի դառնան կարկասան Հանդերձ անարգ պատահալ: Երբ հարցնենք քեզ յայնժամ Ո՛ր անցաւ եմ դիմաց գեղ, Ո՛ր զանգն աշխոյժ աւուրցդ այն. Ըսել՝ եմ յայս խորապեղ, Լինի ամօք ահուելի, Ունայնութիւն անօգուտ: Ո՛ր այլ գովես արժանի Դան զայս բընաւ տայր գեղորդ, Երէ ըսել կարէիր. Ահա մանկիկն իմ սիրուն, Լընու զիմ վայր անխըսիր. Անցեալ աւուրցս տայ ներում. Թէ գիտայիր գեղ նորա Է եմ սերունդ սիրափայլ, Վերածընիլ էր անա Յայդ ծերութիւն զառաւեալ, Եւ յերակուսող այլ եւս զով Տեսնել զառիւնդ եռալով: (Շէյքսպիր) Թարգ. Ա. Հ.

Կուրս պետական դատաստանի իրաւասութեան: Ի հարկէ կարելի է երևակայել, թէ ի՞նչ քանակ և ի՞նչ որակ պիտի ունենան այն գործերը, վէճերը որոնք Կոստանդնուպոլսոյ նման մի քաղաքի մէջ յուզուելով, Պատրիարքարան կը մանեն, Պոլսոյ հոգեւոր ատեաններուն մէջ ծանրագոյն կշիռ ունեցող խնդիրներն են՝ օժտի վէճերը, գաւառացի գործաւորաց հետ ամուսնացած կանանց զանգաւանները և իրենց ամուսիններէն հեռու իրենց ուղած մարդկանց հետ կենակցութեան յառաջացած չարիքները, կնախոյ մարդկանց պահանջը, որոց շատերը յառաջ եկած են այն պատճառով որ աղջկայ ծնողը օժտու են խոտապել տալ և պսակէն յետոյ դրժել են իրենց խոտամանը, այդ պատճառով և փեսան թողել է կնոջ և հեռացել. ամուսիններէն լքուած, կամ վռնաւորած անմեղ կանանց պահանջները՝ զեղխութեան մատնուած ամուսիններէն՝ ապրուստիմասին, և այլն, և այլն, և ասոնց նման խնդիրներ, որոց համար հազիւ թէ աղգային եկեղեցական ժողովը կարող է մի բան ընել, հետեւաբար հազիւ թէ հարկ լինի Հայրապետական Աթոռին դիմելու և ընդհանուր եկեղեցական ժողով գումարելու համար: Այս խնդիրները դուրս են այն գծէն զոր եկեղեցական ժողովը կարող է որոշել իւր կանոնաց համար: Այստեղ հարկաւոր է աւելի քան ինչ որ եկեղեցական ժողովը կարող է: — Այստեղ հարկաւոր է նախապէս քերիտոնեայ անուամբ հեթանոսները քերիտոնէութեան դարձնել: Այդ խնդրոց պատճառ տուող յուշութեան դէմ ամէն մի օրէնք անգոր է...

ՊԱԹՈՒՄԻ ՀԱՆՔԵՐԸ

Ժամանակէ մը ի վեր Կովկասի և մասնաւորապէս Պաթումի բնական հարստութեանց մասին չահեկան տեղեկութիւններ կը տեսնուին լրագրաց մէջ. ըստ որում մեր ազգայինք ստուար թիւ մը կը կազմեն Կովկասիոյ մէջ, պէտք է որ լաւ ուսումնասիրեն այդ պարբերական հրատարակութիւնները և ըստ կարելոյն օգտուին ատենցմէ: Կովկասիա և մասնաւորապէս Պաթում, իւր դրից բերմամբ մեծ դարկ պիտի տայ մասնաւոր ապագայի մը մէջ թէ՛ վաճառականութեան և թէ՛ ճարտարագործութեան: Պաթում որ մի տասնեակ տարիներ առաջ աննշան քաղաք մ'էր Սեւ ծովու վրայ, այժմ ամենակարեւոր վաճառահան քաղաք մը եղած է. Հայ և օտար դրամատէրք օրէ օր կ'ընդարձակեն իրենց նաւթային ճարտարագործութիւնը. միւս կողմանէ մասնաւորաց ուշադրութեան առարկայ կը լինի Ճորոխի ընդարձակ հովիտը ուր հանքային ճոխ հարստութիւն մը կը գտնուի: Մայրաքաղաքիս Առեւտրական Սենեկին Պաշտօնական լրագիրը այս մասին կարեւոր տեղեկութիւններ կը հաղորդէ իւր վերջին 366 թուոյն մէջ զորս կը փութամբ արտատպել:

«Մեր 352 թուոյն մէջ, որ ի վերջին 26 սեպտեմբերի, հրատարակեցինք Ֆլորանսայի Դեր-Հիւպատոսին որ ի Պաթում, Պ. Պէրժըրօնի տեղեկագրոյն մի պարունակութիւնը, զոր ուղղեր էր իւր կառավարութեան. տեղեկագրոյն առաջին մասը՝ զոր արդէն հրատարակեցինք, կը պարունակէր միայն տեղային քարիւղի ճարտարագործութիւնը և վաճառականութիւնը: Բայց Կովկասի միակ հարստութիւնը այդ չէ, այս երկրին մէջ կայ նաև, բաց ի ուրիշ բնական հարստութիւններէ, կ'ըսէ յիշեալ տեղեկագիրը, ուրիշ աղբիւր մը հարստութեան որ վերապահուած է Պաթում քաղաքին շրջակայիցը, գլխաւորապէս Ճորոխի որ քաղքին հարաւային կողմէն 8 քիլոմետր հեռաւորութեամբ կը թափի ի ծով:

Այդ տեղեկագրին կը տեսնուի թէ Պաթումի մէջ կատարուած խուզարկութիւնը շատ չահեկան արդիւնք տուած են. թէպէտ այս խուզարկութիւնը հարեւանցի կատարուած են, սակայն երեւան բերած են պղնձի, արծաթախառն կապարի, զինկի, մանկանկզի, երկաթի և այլ հանածոյներ: Խուզարկութիւնը մասնաւորապէս կատարուած են Պաթումի շրջակայ գաւառացի մէջ, ուր փոխադրութեան և աւուրջէքի դիւրութիւններ կը գտնուին՝ ճարտարական նոր ձեւնարկութեանց նը-

պատեւել կարող: Պղնձի հանքը կը գտնուի Պաթումի մօտ Ճորոխի հովտին մէջ նշանաւոր ստատութեամբ և ուրիշ շատ տեղեր Ճորոխի և անոր օժանդակ գետակներուն բոլոր երկայնութեամբ. և, ինչ որ մասնաւորապէս հետաքրքրական է, հոն կը տեսնուին պղնձի խարամներ (հալելէն յետոյ միացած աղտը), բան մը որ ցոյց կուտայ թէ ի հնունդ այդ մետաղը շահագործուեր է այդ երկրին մէջ, ինչ որ պատահեր է ի Յունաստան, Լօրիօմի և Փոքր-Ասիոյ մի քանի հանքերուն մէջ:

Տեղեկագիրն ի միջի այլոց կը նշանակէ Արդուինէ անդին Խոր-Էլիա գիւղին շրջակայները կատարուած խուզարկութիւնները ուր առատութեամբ կը գտնուին ամէն տեսակ հանածոյներ որք հողին հարստութիւնը ցոյց կուտան: Ծատ երակներ երեւան բերուած են եւ անոնցմէ միոյն մէջ խորերը կատարուած խուզարկութիւնք տեղ տեղ գտած են 1 մէթրէ աւելի թանձրութիւն:

Չինկի և կապարի հանքերուն մէջ երկու մետաղները սերտ կերպով իրարու միացած կը գտնուին գրեթէ բոլոր գտնուած կէտերուն վրայ. զինկին աստիճանն է 50 առ հարիւր. կապարի հանածոյները շատ արծաթախառն չեն, սակայն հին աշխատութեանց միացորդներուն մէջ շատ արծաթով խառն կապարի հանածոյներ գտնուած են:

Մանկանկզի հանքեր գտնուած են Պորճայի և Արդուինի շրջակայները: Ծծումբը երեւան ելած է Մուրկույի հովտին մէջ, Մարմարը կը գտնուի Ուր-ճօքի շրջակայները. տեսակը լաւ է, սեղմ, գոյները սկստ սկստ, Նիքելի և գոպալի բազմաթիւ նմոյշներ գտնուեր են Ճորոխի զանազան օժանդակներուն մօտ, ինչ որ ցոյց կուտայ թէ յաջողութեամբ կրնան պսակուիլ այս երկու մետաղներու մասին եղած խուզարկութիւնք. սոցա գործածութիւնը հեաղհեալ կը բազմապատկի արդի ճարտարագործութեան մէջ:

Ֆորանսայի դեր-Հիւպատոսին տեղեկագրոյն վրայ կրնամք յաւելուլ եւս մեր սա մասնաւոր տեղեկութիւնները, կ'ըսէ Առեւտրական Լրագիրը, թէ Պաշտօնի մէջ, որ Պաթումին 33 քիլոմէթր հեռաւորութեամբ գիւղ մ'է, Ճորոխի հովտին մէջ, գտնուած են կապարախառն արծաթի, զինկի և երկաթի հարուստ հանքեր. առ այժմ տասնչորս երակներ երեւան ելած են զորս դիւրութեամբ կարելի է շահագործել առանց ստորերկրեայ աշխատութեանց: Սոցա մէջ կան զինկի երակ մը որ 75-90 հարիւրամէթր թանձրութիւն ունի, որ ամբողջ Ճորոխի հովտին մէջ ամե-

նէն նշանաւորն է իւր մեծութեամբ, և ուրիշ կապարախառն արծաթի 3-5 և երկաթի 10-15 հարիւրամէթր թանձրութեամբ երակներ: Պաթումի Թուրքիոյ Հիւպատոսին հաղորդած տեղեկութիւններէն կը տեսնուի թէ Պաշտօնի հանքերն երկրին մէջ հանրածառօթ, շատ հարուստ և դրից բերմամբ շատ յարմար են շահագործուելու, թէ մինչև Մարատիտի — Ճորոխի ամառաց վերայգիւղ մը — լաւ ճանապարհ կայ կառօք երթեկելի, թէ այս գիւղէն մինչև Պաշտօն հեռաւորութիւնը հինգ քիլոմէթր է, թէ Ճորոխ մասնաւորապէս շինուած տեսակ մը նաւակներու համար տարւոյն ամէն եղանակներու մէջ նաւարկելի է, և այս նաւակներու միջոցաւ է որ ճարտարք ու իրեղէններ կը փոխադրուին Արտուինի ու Պաթումի միջև:

Եզրակացներով, տեղեկագիրը կ'ըսէ թէ Ճորոխի աւաղանը կը բովանդակէ մեծ հարստութիւններ դեռ չշահագործուած, եւ թէ Պաթում քաղաքին կը վերապահէ նոր և կարեւոր օժանդակ մը ճարտարական և առեւտրական գործունէութեան: Ֆորանսայի Հիւպատոսը կոչում կ'ընէ Ֆորանսայի ճարտարագէտներուն և դրամատէրներուն, որք ի Կովկաս կրնան գտնել իրենց փորձառութեան և դրամական միջոցներուն օգտակար եւ արդիւնաւէտ կիրառութիւն, կանխելով Գերմաններն եւ Անգլիացիները՝ մեծագոյն ապագայ ունեցող հանքային շահագործումներու մէջ:

Տեղեկագիրը կը նկատէ թէ Կովկաս օժտուած է անհուն հարստութիւններով և թէ ընդարձակ դաշտ մը կը բանայ ձեռնհաս մարդերու գիտական, առեւտրական և ճարտարական գործունէութեանը:

Մեր ժամանակ տեղեկութեանց յենլով կը յաւելուի թէ յիշեալ Պաշտօնի հանքերը փոխանցուած լինելով Ռուսահպատակ Պ. Բագարատ Արթինովի վրայ, զայնս շահագործելու համար Ֆորանս-Ռուս ընկերութիւն մը պիտի կազմուի Ֆորանսայի մէջ:

Կը ցաւինք որ Հայ վաճառականք այնչափ հեռի կը մնան այսպիսի շահաբեր գործառնութիւններէ որ Պ. Արթինովի կ'երեւի թէ հարկադրեալ կը գտնէ զինքը օտար դրամատետր գիմելու. փափաքելի է որ եթէ Հայ վաճառականք չեն կարող կազմել այսպիսի ընկերութիւն մը, գէթ կարեւոր բաժին մը ունենան մանաւանդ այս գործի մէջ որու մենաշնորհն Հայու մը կը վերաբերի:

...

ԿԱՊԴՈՎԿԻՈՅ ԳԱՒԱՌԻՆ

ՀԻՆ ԼԵՁՈՒՆ ԵՒ ՆՈՐԱ ԱՐԴԻ ՅՈՒՆԱՐԻՆ

ԳԱՒԱՌԱՐԱՐԲԱՌՈՐ

(Շարունակ. տես թիւ 8)

1) Abh = առաւել. բառ Ֆարսացւոց: Այս բառ հաւանականաբար ազգական է հայերէն յաւին. աւելի. անյաւ. յաւելու: Աւելորդ է ըսել թէ կապադովկերէն abին և վերոյիշատակեալ հայ բառերուն մէջ եթէ խնամութիւն մը կայ, abին հայերէնէ մոտած լինելը երբէք չապացուցաներ այս, ըստ որում հայերէնի մէջ իբրեւ արմատ միայն կայ, իսկ կապադովկերէնի մէջ իբրեւ ուրոյն բառ: Բայց աւելի հաւանական է ազգական նկատել (եթէ նոյնը չէ) կապադովկերէն ab կամ aor յունարէն aorին. իսկ վերոյիշեալ հայ բառերուն արմատը պէտք է կապադովկերէն gav կամ չաւ կամ չաւ բառին մէջ (տես սոյն բառը):

2) Abidos = աւետիս, լուր. բառ մը որ պահուած է միայն տարեգլխոյ երգոց մէջ որք սա պէս կ'սկսին. «աւետիս փալանդոս կամ կիլիկիդոս», ևն, ևն. — յունարէն կամ թրքերէն, որովհետեւ թրքախօս Յունաց քով ալ պահուած է: Անշուշտ այս բառը ազգական և համարմատ է յունարէն աիօ, աիօս, աիօսի, աիօսի, աիօսի, աիօսի, աիօսի, աիօսի, և աիօսի բառերուն. սանսկըրիտ vadami = ըսել, խօսիլ, հայերէն աւետիլ, աւետիլ: Թէ և այս բառ յոյժ մօտ ազգական է յիշուած հայերէններուն հետ, սակայն և այնպէս արամաբանութեան հակառակ է հետեւցնել աղկից թէ հայերէնէ մուտ գտած է, քանզի միևնոյն խնամութիւնը կը տեսնուի նաև յունականներուն հետ և ամենայն հաւանականութեամբ կրնանք կապադովկերէն ենթադրել, մանաւանդ զի աւետիսի քովի բառը փալանցոս լատիներէն kalendalին հայկական ձևը չէ. հայերէնի մէջ տարւոյն առաջին օրը կ'ըսուի կալանդ ըստ հայ լեզուի օրինաց զորս բացատրեցինք:»

Հոս քիչ մը կանգ առնենք: Աւետիսը յունարէն կամ թրքերէն պէտք է որ լինի ըստ Պ. Քառօլիտի. ինչո՞ւ — վանդի թրքախօս Յոյնը ալ կը գործածեն եղբր զայն: Միթէ թրքախօս Յունաց բոլոր բառերն ալ թրքերէն են, և կամ նոցա ոչ-թուրք բառերն յունարէն պէտք է լինին անպատճառ. — երբէք. տեսնաք և տակաւին պիտի տեսնենք թէ որքան հայ բառեր կը գործածուին կապադովկիոյ տաճկախօս Յունաց քով: Բաց աստի, աւետիս երգելու կամ ման գալու, ինչպէս կ'ըսեն մեր ռուսահայ եղբարք, սովորութիւնը այնքան տա-

րածուած է ի Հայս որ կրնանք ըսել ապահովապէս թէ Հայոց միայն կամ առաւելապէս յատուկ է: Եւ ի՞նչ է այդ սովորութիւնը. կաղանդի գիշերը աղքատիկ. տղայք հաւաքուելով խումբ խումբ հարուստներու տունները կը շրջին աւետելով ու մաղթելով նոր տարի և բարի կաղանդ: Ամէն տուն կուտայ իւր կամուրջ նուէրը որ ընդհանրապէս կը կոչանայ պտուղի, անուշեղէնի մէջ. ահա ասոր կ'ըսեն աւետիս պտուղի(1) Ստուգիլ թէ և Յոյնը ալ ունին այս հին ու բարի սովորութիւնը, սակայն անոնց միշտ և ամենուրեք նոյն երգն եղած է «այ վասիլիոս է'րյեդէ աբօ' դի'ն կեսարիան» մինչդեռ հայ մանկաց տարեգլխոյ նախերգանքն ու նորա արարողութիւնն ըստ տեղւոյ և պարագայից առաւել կամ նուազ կը տարբերի: Ուրիշ տեղէ աւելի կեսարիոյ մէջ՝ ամանորի յունարէն երգն պէտք է որ բոլոր միւս յունարէն վայրերու, որ կողմ որ լինի, յոյն տարեգոյց հետ նոյնը լինէր, զի ծանօթ այ վասիլիոս յատկապէս կեսարիոյ վերայ շինուած է, անոր հետ աւերջութիւն ունի, և զարմանալի բան, նոյն իսկ կեսարիա բացառութիւնն, գուցէ միակ, կը կազմէ ընդհանուր կանոն. և ընդհանուրն այդ շեղումն չէ կարելի մեկնել այլով իւրեք բայց եթէ Հայ լեզուի առաւելախիւ ազգեցութեամբն այդ կողմերն: Հետաքրքրութեան համար հոս կը դնեմք իւր ամբողջութեամբն կեսարիոյ հայ ու յոյն մանկանց կաղանդի «աւետիս» երգն որուն առաջին տունը միայն կը յիշէ Պ. Քառօլիտի.

Աւետիս կալանցոս

Թանտըր եանա'

Քեթէ փիլէ

Օ քեթեմէն պանա տիւլէ

Ելլ պաշը

Ելլանձը Թաշը

Վերին, վերին կիտելիմ

Վերմէզէնիլ նէ' իտէլիմ,

Պիլ Ալլահն բուլուլուլ

Ազիզէրին ձեռնարկ (էջ 246-247)

Իւր պարզութեանը մէջ ո՞րքան ալ յուզիչ է սոյն երգը: Կը նկարագրէ տունն ուր աւանդական թոնիրը վա-

(1) Կեսարիոյ մէջ տունները հողէ ու քարէ շինուած են և տանեաց վերայ կը մինտր շինելով, տղայք տանց վրայ կը պտուղին ու չուանի մը ծայրը փոքրիկ զամբիւլ կապելով երգիքները կը բանան ու զամբիւլը վար տանը մէջ կը կախեն, ամենքը միաբերան վերոյիշեալ երգը կանչելով: Տան մեծը օրուան միջերէն, ևն, զամբիւլը լեցնելէն վերջը տղայք վեր կը քաշեն զայն՝ միևնոյն արարողութիւնը երթալ կատարելու համար կարգաւ: Ծ. 607.

աւած, կ'եմեն «քեթիլն» զոր կշտապինդ կ'ուտեն տնեցիք մեծ ու փոքր: Այս, տուէք, մուէք այդ քեթիլն, Աստուծոյ ծառայն եմք մեք. բայց եթէ չէք տար, հոգ չէ, կ'ըսէ: Անուշ լեզուն օձը ծակէն կը հանէ, կ'ըսէ առակը, և առակախօս կեսարացոց ժիր մանկունք անգամ կ'երևի թէ խիստ լաւ վերահասու եղած են սոյն առակին ճշգրտութեանը. կ'աղաչեն, կ'ուղեն, և եթէ չստանան իսկ, ինչ որ դուռն ուրեք կը պատահի, չեն սրգոյր, բարկանար, չեն անիծեր: Զի կան չարածիններ ալ որ, եթէ տաս, շնորհակալ կը լինին ու կ'օրհնեն, իսկ եթէ չտաս, պղտիկ անէծք մ'ալ կ'արտասանեն նման Պօլսեցի խմբագրաց ոմանց որք հինգ տասը զրուշի չնչին խնդրոյ մը համար հրէշը հրեշտակ կ'ընեն շատ անգամ, եթէնքորդ երկինքը բարձրացնելով, աղնուականութեան տխուր ու վկայաթուղթ տալով, և կամ ընդհակառակն հրեշտակը ճիւղի փոխելով գեհէնը կ'իջեցնեն, Հնոցի հոյս բորբոքելոյ արժանի: Տես մոտիկ ըրէ, օրինակի աղագաւ, ի՞նչ կ'ըսէ Ակնեցի լաճը.

Այսօր կաղ է,

Վաղը կաղանդ է,

Ով որ տայ, չէն կենայ,

Ով որ չտայ, հաւուն տոտիսը չորնայ:

Միթէ կեսարացւոց ու օրհնած փաղափ բնակչաց նկարագիրը չ'երևիր իրենց երգոց մէջ իսկ.

Զիարդ և իցէ, թէ և օտար բառի մը հետ գործածուած լինի և իւր համանիշ նմանաձայններն ունենայ յունարէնի մէջ, բայց և այնպէս յունութեան ձեւ ու կերպարանք չունի աւետիսն այս վիճակին մէջ. Եւ ինքը յոյն բրոքիստօրն՝ յիշեալ բառին յունարէն լինելուն մասին ունեցած տարակոյսը չապացուցանե՞ր միթէ, երբ կ'ըսէ թէ «գուցէ թրքերէն է». այդ նկատմամբ սակայն ու է փաստ մը յառաջ չ'երևիր, թէ և կըրնար յիշել ըստ մեզ հասիսէ, հավասիս, և նոր պարսկերէն ցէվիս (լուր, լուրեր): Հայր Տէրվիշեան իւր Հնդեւրոպական Նախալեզուին մէջ թէ և յիշած է աւետիսը, բայց որոշապէս չ'ըսեր թէ չնըշանակեր նորա ծագումն, թէ և յունարէն, հնդկերէն, լատին, զանգիկ արմատները կը յեղեղէ:

3) Ասիս = թշնամի. բառ Ֆարսացւոց: Յայտնի է թէ այս բառը ազգական է հայերէն աւետիլ, աւետիլին: Հոս ալ խնամութիւնը արմատական է: Բաղդատէ նաև յունարէն osiudէ լատին od, որոնք համարմատ կը նկատուին սանսկըրիտ dvisch = աւետիլ: Հայր Տէրվիշեան որոյ դառնապէս մահն ողբաց Հայ դըպրութիւնն, ad us, լատ. od նախալեզուեան արմատ կ'ընդունի որ ուրիշ

հնդերոպական քոյր լեզուաց մէջ չկայ ըսած է, բայց ահա՛ Պ. Քառօլիտի կը յիշէ յունարէն *οσφουδ* մը: Չենք գիտեր ճշդիւ թէ. իրաւունքն որո՞ւն է, Կապադովկիականքի հեղինակի՞ն թէ վաղամեռիկ Լեզուի ողբացեալ խմբագրին:

(Շարունակելի)

14)

Շ Ե Յ Ք Ս Բ Ի Ր

Վ Ե Ն Ե Տ Կ Ո Յ Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Հ Ա Ն Դ Է Ս Գ.

ՏԵՍԻՒՆ

ՄՏՆԵՆ Լօրէնցօ, Եսիգա եւ Սօլանիօ:

Պատանիօ. — Լօրէնցօ և Սօլանիօ, բարի եկաք, թէպէտ նոր է իմ իշխանութիւնն աստ՝ ինձ իրաւունք տուող ձեզ բարի գալուստ մաղթելու, — Ձեր հրամանաւ, քաղցրանայ՞ իմ Բորսիա, կը մաղթեմ բարի գալուստ բարեկամաց և հայրենակցաց:

Բորս. — Նոյնը իմ կողմանէ, Տէր, բոլորն ալ բարի եկան:

Լօրէն. — Շնորհակալ եմ, ազնիւ օրհորդ. — Իմ մտանքն, ահա իմ, նպատակ չունէի զձեզ հոս գալ տեսնելու, բայց ճամբան Սօլանիօի հանդիպեցայ որ շատ թախանձեց ինձ ընկերանալու, այնքան որ չկրցայ ո՛չ ըսել:

Սօլան. — Այդպէս է, Տէր իմ, և պատճառ ունէի այդպէս ընելու: Սինեօր Անթօնիօ իւր յարգանքը կը մատուցանէ ձեզ (Պատանիօի կուտայ նամակ մը):

Պատ. — Նամակը բանալէս առաջ, ըսէ ինձ խնդրեմ, ի՞նչպէս է ազնիւ բարեկամ:

Սօլան. — Հիւանդ չէ, Տէր իմ, եթէ մտային հիւանդութիւն չունենայ, և ո՛չ ալ առողջ է, եթէ մտօք չէ առողջ: Ահա իւր այդ նամակը կը յայտնէ ձեզ իւր վիճակը:

Կրաս. — Նէրիսա, մեծարէ այս օտարականը, բարի գալուստ մաղթէ անոր: Տուէք սեղմեմ ձեր ձեռքը, Սօլանիօ, ի՞նչ լուր վենետիկէն: Ի՞նչպէս է արքայական վաճառականն, ազնիւ Անթօնիօն: Գիտեմ որ պիտի ուրախանայ մեր յաջողութեանց համար: Մենք՝ իրեւ Յատոններ՝ եկանք գրաւեցինք ոսկեգեղմը:

Սօլան. — Երանի թէ նորա կորուսած ոսկեգեղմը գտած լինէիք:

Բորս. — Այդ թղթի մէջ աղետալի լուրեր ըլլալու են որ Պատանիօի այտերէն գոյնը կը խլեն: Սիրելի բարե-

կամ մը մեռած է անշուշտ, զի ոչ մի բան աշխարհիս մէջ չպիտի կրնար խըռովել, յուզել այսչափ: Հաստատամիտ մարդու մը կողմութիւնը: Ա՛հ, գէշէն գէշ: Այժմ, Պատանիօ, ես քու կէսդ եմ, և կէսն ինձ կը վերաբերի այն լուրերուն զորս կը բերէ քեզ այդ նամակ:

Պատ. — Ո՛հ, իմ անոյշ Բորսիա, չէ եղած երբէք որ այսքան անհաճոյ բառեր արատաւորած ըլլան թուղթը. գեղազմայլ տիկին, երբ առաջին անգամ ձեզ խոստովանեցայ իմ սէրն, համարձակօրէն ձեզ ըսի որ իմ բոլոր հարստութիւնն արեանս մէջ է, այսինքն թէ ես ազնուական եմ, և ձեզ յայնժամ ճշմարտութիւնն ըսի, և սակայն, սիրելի տիկին, հաւասարեցնելով ինքըզինքս ոչնչի, կը տեսնես թէ որչափ պարծենկոտ եղած եմ: Երբ ձեզ ըսի թէ իմ վիճակ ոչինչ է՝ պէտք էի ըսել թէ ոչնչէն ալ ստոր է, զի ճշմարտ, պարտաւորեալ եմ շատ սիրելի բարեկամի մը, որ երաշխաւոր եղաւ իւր դաժան թշնամւոյն մօտ իմ ծախսերը հոգալու համար: Ահա՛ նամակ մը, տիկին, որուն թուղթը բարեկամիս մարմինն է, և մէջը գրուած մէն մի բառ բացուած վերք մ'է, ուրկէ արիւնը կը հոսի: Բայց միթէ ճիշդ է այս ամէնը, Սօլանիօ, միթէ բոլոր իւր գործերն անյաջող վերջացան, ամէն բան կորա՞ւ: Միթէ ոչ մի նաւ չազատեցա՞ւ Տրիպոլիս, Մէքսիկա, Անկիլա, Լիզպոնա, Պիսպէրիստան, Հնդկաստան գացող նաւերէն: Միթէ ոչ մին չը գերծաւ նաւակործան ժայռից դէմ աղետաբեր բաղկումէն:

Սօլան. — Եւ ոչ մին, Տէր իմ. բաց աստի, կ'երեւի թէ եթէ դրամ ալ ունենայ Հրէին վճարելու, չպիտի ընդունի նա: Չտեսայ երբէք մարդակերպ արարած մը որ այչափ ծարաւի և սովեալ ըլլայ մարդու կորստեան: Գիշեր ցորեկ իւր թախանձանքներով ալ կ'ըզբաղեցնէ դուքսը, և կը գանգատի որ ալ եւս ազատութիւն չէ մնացած ի վենետիկ, եթէ չգործադրուի օրէնքը: Քսանի չափ վաճառականը, դուքսն ինք ալ և մեծատունը ականաւորք ջանացին շատ զինքն համոզել, բայց չկարողացան ետ կեցնել զնա իւր ատելախառն կրկնաբանութիւններէն. նա միշտ կը կրկնէ. Խոստմազանցութիւն, արդարութիւն, և իւր մուրհակը:

Եսիգա. — Երբ իւր հետն էի, երդուընցաւ թիւպալի և ֆիւսի մօտ, իւր հայրենակիցներն, որ աւելի կ'ուզէր Անթօնիօի մարմինը քան թէ ստանալիք գումարին քսան անգամը. և զիտեմ, ահա, որ եթէ օրէնքն, իշխանութիւնը և կառավարութիւնը չմերժեն նմա, մեծ աղէտ մը պիտի հասնի խեղճ Անթօնիօի:

Բորս. — Քու սիրելի բարեկամդ է որ այդպիսի դժբաղդութեան մը մատնուած է:

Պատ. — Սիրելադոյնն բարեկամացս, ամենայնպէս մարդն: Վսեմագոյն և անխնջ հոգին որ միշտ պատրաստ է ծառայութիւն մատուցանելու ուրիշներուն, մարդ մը որ բոլոր Իտալիոյ մէջ ոչ ոք՝ բաց ի իրմէ՝ կը կրէ յանձին հռովմէական հին առուրց պատուոյ զգացումն:

Բորս. — Ի՞նչ գումար կը պարտի Հրէին:

Պատ. — Երեք հազար տուքաթ ինձ համար:

Բորս. — Ի՞նչ, ո՞չ աւելի: Վճարէ անոր վեց հազար և պատուէ մուրհակը: Կրկնէ վեց հազարն և ապա եւտպատկէ զայդ, որպէս զի Պատանիօ իւր սխալմամբ թէլ մը մազ կորուսանել չտայ այդպէս նկարագրուած մարդու մը դուքսն: Նախ եկուր ինձ հետ եկեղեցի զիս կինդ կոչելու համար, հուսկ պացիր վենետիկ, բարեկամիդ մօտն, զի անհանգիստ սրտով չսիրտի պառկիս Բորսիայի քով: Պիտի ունենաս այնքան ոսկի որ կարենաս այս յոքր պարտքն քսան անգամ վճարել: Յետ վճարման, ի միասին բերէք ձեր այդ ճշմարտ բարեկամը: Մինչև ձեր դարձը, աղախինս Նէրիսա և ես, իբր կոյս և այրի պիտի ապրինք: Օ՛ն, երթանք, զի ամուսնութեանդ օրն իսկ պէտք ես մեկնիլ: Բարի գալուստ մաղթեցէք ձեր բարեկամաց, լաւ դէմք ցոյց տուէք. քանի որ սիրով գնուած էք դուք, հարկ է որ սիրեմ զձեզ: Բայց նախ տեսնեմ ի՞նչ գրած է բարեկամդ:

Պատ. — (Կ'ընթեռնու) Քաղցրիկ Պատանիօ, իմ նաւեր բոլորը կորան, պարտապահանջքս անգութ կը դառնան. վիճակս շատ գէշ է. Հրէին մուրհակը անվճար մնաց ժամանակին. քանի որ չպիտի կարենամ վճարել, կարելի չէ որ ապրիմ. բոլոր ինձ ունեցած պարտքը հատուցուած պիտի ըլլան, եթէ մահուընէս առաջ կարենամ գրեզ տեսնել: Սակայն ինչպէս որ հաճելի է ձեզ, դարձեալ նոյնպէս ըրէք, եթէ ձեր բարեկամութիւնը չհամոզէ զձեզ գալու. նամակս թո՛ղ չհակառակի այդմ:

Բորս. — Ո՛հ, սիրելիս, փութացուր գործերդ և մեկնէ:

Պատ. — Քանի որ ձեր ազնիւ հրամանն ունիմ մեկնելու, պիտի փութամ, և մինչև վերադարձս, ոչ մի անկողին չպիտի մեզանչէ և ոչ ալ ուրիշի հանգիստն զմեզ իրարմէ պիտի բաժնէ: (Կ'եկնեմ)

Թարգմ. Ա. ՀԱՄԲԱՐԳԱՐՔԱՆ

ՓՈՔՐԻԿ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Գաղափար. — Գաղափարաց կազմութեան վրայ շատ և զանազան կարծիքներ յայտնուեցան. ոմանք զանոնք կը համարէին փորձառութենէ յառաջ եկած, այլք բնաւորութենէ որ մարդոց գերաստիճան կատարելութիւնն է, և ոմանք եւս գաղափարները մարդոց մէջ բնածին կը համարէին: Այս վերջին կարծիքը հիմա մէկդի ձգուած է, կամ առաջնոց մէջ բովանդակուած: Կարծեաց զանազանութեան համեմատ սկիզբէն ի վեր փիլիսոփայք երկու խումբերու բաժնուեցան. առաջինք կոչուեցան վարձակամբ, երկրորդք՝ իմացակամբ:

Չանազան առման համեմատ գաղափարները շատ մասերու կը բաժնուին: Եւրոպայի գաղափարն այն է, երբ նիւթի մը վրայ ըստ ինքեան կը խորհիմք, առանց բաղդատելու այլ նիւթոց հետ:

Վերացեալ է գաղափարն, երբ անով նիւթոյն հանգամանքները միտք կը բերուին ինքնին և որոշ որոշ, իբրեւ ձև, հոտ, գոյն, ևն. իսկ երբ այս հանգամանքները մտածեմք վարդին վրայ, այն ստան կը կոչուին քանդակագետ:

Եկամուտ գաղափարն այն է, որ յառաջ կուգայ արտաքին առարկայից մեր զգայարանաց վրայ ըրած տպաւորութենէն:

Մտացածին գաղափարն այն է՝ որուն նիւթը չկայ բնութեան մէջ, զոր օրինակ, թեւաւոր ձի, կաթնեղէն գետ, և բանաստեղծից երեւակայական խորհուրդները:

Բնածին գաղափարն այն գաղափարն է զոր Աստուած ինքնին հոգեոց մէջ որդւորած է: Մի քանի փիլիսոփայներ բնածին գաղափարները կ'ընդունին, և շատերը կը մերժեն, ըսելով թէ ամէն ինչ փորձով և բաղդատութեամբ կ'իմանամք:

Իրական գաղափարն այն է՝ որ նիւթոց մը գոյութեան կը վերաբերի. իսկ անգոյ իրի մը գոյութեան ըմբռնումը կ'ըսուի ժխտական գաղափար: Հոգին կրնայ միայն ըմբռնել ժխտական գաղափարներ դրական գաղափարաց միջոցաւ, որք առաջնոց հակառակ են: Ձոր օրինակ՝ կոյրն է մշտնջենաւոր խաւարի մէջ և համրն յախտեանական լըռութեան մէջ. ոչ կոյրն կ'ըմբռնէ թէ ի՞նչ է խաւարը, և ոչ համրը թէ ի՞նչ է լըռութիւնը, վասն զի կոյրը չունի լըռոց գաղափար, և ոչ համրը ձայնի:

Իսկ. — Ձուածն ոսկը, երկու կողմէն տափարակ, խելաց ընդունարան:

Գլուխը ութ ոսկրներէ կը բաղկանայ, առաջակողման մասը կը կոչուի ճակատ, ետեւի կողմը՝ սկաւառակ, եւ

որովհետեւ գանկն է ուղեղի ընդունարան, անոր արտաքին ձևն ալ կը փոփոխի անոր ազդեցութեանց համեմատ: Անոր արտաքին ձևոց և կազմութեան վրայ եղած հետազոտութիւնը նոր գիտութիւն մը հաստատեցին, որուն գլխուն կը համբաւաւորն կալ, և այդ գիտութիւնը կոչուեցաւ գանկաբանութիւն:

Գանկաբանութիւնը գանկին կազմութեան և անոր տափարակ կամ ուղեցեալ զանազան մասանց նայելով կը հետեւցնէ մարդոց մտաւոր կարողութիւնը և անոնց ներքին բաղձանքները:

Իսթեյուր. — Ըմպելի մը՝ որ կը շինուի գարելով և հմուլով (heublen), որուն հետ կը խառնեն ջուր, շաքար, խէժ, և այլն: Գարեջուր յորինելու արուեստը շատ հին է, և հին ժամանակները սովորական ըմպելի էր եգիպտացոց և ուրիշ ազգաց. այժմ՝ շատ կը գործածուի, մանաւանդ այն կողմերը յորս երկիրն այգեւէտ չէ, և գինին նուազ է, ինչպէս ի Հոլանտա, ի Պելճիա, յԱնգլիա, ի Գերմանիա, և այլն:

Իււազան. — Գաւազանն էր նշան պառույ և իշխանութեան: Հռոմայեցոց մէջ հիւպատոսներ կը կրէին փղոսկրեայ գաւազաններ, և պրիտորք ոսկի գաւազաններ, իսկ հաւահմայք գլխիկոր ճոկան մը կը կրէին: Հին ժամանակ Գաղլիոյ թագաւորները արքունի գաւազանէն զատ՝ ոսկեով դրուագեալ մեծ մական մը եւս կը բռնէին:

Գեղարուեստ. — Այս անուամբ կը կոչուին այն ամէն արուեստք՝ որք կ'ըմպելեցնեն մեր զգայարանները, ինչպէս են նկարչութիւն, արձանագործութիւն, փորագրութիւն, ճարտարագեւորութիւն, երաժշտութիւն և պար:

Գեսաձի. — Մեծ և յաղթանգամ չորքոտանի, կը կռւէ մենչեւ երկու հազար հազարակրամ, և երկակենցաղ է. կը բնակի Ափրիկէի հարաւային կողմանց գետերուն մէջ: Ասոր երկայնութիւնը կը լինի չորս մէթր, բարձրութիւնը մէկ ու կէս մէթր, և շատ կարճուտն լինելով՝ որովայնը գետնին կը մօտենայ, Մորթը սեւ է, կարծր և անմաղ, և կը կերակրուի ձուկերով և բոյսերով: Ամբողջ օրը գետերուն եզերաց մէջ կ'անցունէ, գոյգն դուրդումէ ջրոյն յատակը կը սուզի, և հոն կրնայ պահ մը կենալ առանց վեր գալու և շունչ առնելու: Գիշերը ցամաք կ'եննէ, և կ'աղարտէ շաքարի, բրնձի և կորեկան բոյսերը: Ի բնէ հեզ է և ասլուշ, այլ անոր կատաղութիւնը սաստիկ է: Կ'որսացուի փոսի մէջ ձգուելով, կամ՝ աղեղամբ և հրացանով զարնուելով: Բայց շատ դժուար է որսալը՝ իւր անհար զօրութեան և անխոցելի լինելուն համար:

որովհետեւ որովայնէն և ազդրին մէջէն կրնայ վիրաւորուիլ: Մորթը շատ բաներու կը գործածուի: Ահաւայները փղղոսկրեայ են՝ որք կեղծ ահաւայներ չինելու լաւ կը յարմարին: Միան ընտիր է և առողջարար, և ոչ գթուարամար:

ԲԱՌԱԿՐԿԻՏ

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

— Կ'անցնի ամէն ինչ հանգոյն ըստուերի՝ որ ունայնութիւն և եթ կը թողու իւր ետեւ: Կը մնան յիշատակք անողոքելիք որք շարունակ կը կրծեն մարդու սիրտն, նման այն առասպելեալ թռչնոյն որ կը կրծէր էր երբեմն Կովկասու գլուխն չլթայուած եղկելոյն իրանն:

— Պճնասէր անձը կը նմանի յանգածոյս ոտանաւորի մը ուսկից բացակայ է միշտ իմաստն:

— Մոլութեանց ամենէն՝ սոսկալին ու միանգամայն անխուսափելին խաղն է: Խաղամու մը այն ճանճն է որ անգիտակցաբար անուշեղէնի մը վրայ թառած է, և որուն ամենափոքր խրտումն քայլ մի ևս է դէպ ի մահ:

— Նա որ չգիտէ տակաւին թէ ինչ է երջանկութիւնը՝ բերանը թող տանի սիրոյ ծորակին: Նորս մէկ կաթիլը կը բաւէ կշտալինդ յագենալու համար երջանկութենէ:

— Ծնմարիտ սիրոյ վէրքն եթէ բուծի իսկ՝ գոնեա՛ սպին կը մնայ:

— Պսակի արարողութիւնը հրաւիրերգ մ'է՝ կամ յարքայութիւն կամ ի տանջարան:

— Երանութիւնը կը նմանի խաղաղիկ ու հայելանման ծովու մը զոր սրբաբանք դիտած ատենդ յանկարծ կը մըրըրկի աղտաղտին կոհակներով:

— Թշուառութիւնը յաճախ ծնունդ կ'առնու սիրոյ չափազանցութենէն:

— Իւր հարստութիւնը յուճակտոս մխտոլ անձը տարբերութիւն չունի այն գրագէտին որ դամբանական մը կը կարգայ հարստեան հանդիսի մէջ:

— Ձախողութիւնը նքոյր մ'է՝ ուր կը մաղուն համբերութիւն և առաքինութիւն:

— Երիտասարդ հասակի մէջ ո'րչափ բարեգործութիւններ ընելու հետամըտիմք՝ այնչափ կը բազմացունեմք քաղցրիկ ու մխիթարական յիշատակներու պաշարն ծերութեան համար:

— Շողքորթութիւնը կը նմանի այն շիշին որուն վրայ նեկաւար գրուած է և որուն մէջ բնափրոն կայ:

ԽՈՐԷՑԵԱԼ ՄՏՈՍՏԻԿ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատգամաբախտիւնք. — Հայէպի Բումգալէ գաւառակին դայմագամ տնուանեցաւ Մէհմէտ Սալիհ էֆէնտի. — Խարբերդի նախնական դատարանին հարցաքննիչ գաւառոր տնուանեցաւ Խայրէտտին էֆէնտի, հարցաքննիչ գաւառոր նախնական դատարանին Սարուսանի, և իրեն յաջորդեց Էսաա էֆէնտի, նախորդ հարցաքննիչ գաւառոր Թէքէֆի. — Սիւլէյմանիյէ գաւառին հարցաքննիչ գաւառոր տնուանեցաւ Ահմէտ էֆէնտի, հարցաքննիչ գաւառորի օգնական Միլաս գաւառին. — Էնկիւրիի Այալ գաւառակին գայմագամ տնուանեցաւ Հաճի Մուսթաֆա էֆէնտի, գայմագամ Պէյրաղարի, և իրեն յաջորդեց Մուսա Քեաղիմ էֆէնտի, գայմագամ Այալ գաւառակին. — Թէհրանի Օսմ. դեսպան տնուանեցաւ Նուսուհի պէյ, նախորդ կուսակալ Խորբերդի. — Կալացի Օսմ. ընդհանուր հիւպատոսարանի քանչէլէր տնուանեցաւ արտաքին թղթակցութեանց դիւանի քարտուղարներէն Տիմիթրաքի էֆէնտի, փոխանակ Ալէքս Ստէմ էֆէնտիի, որ տնուանեցաւ Արտաքին թղթակցութեանց քարտուղար:

Պատգամաբախտիւնք. — Դ. կարգի Մէհմէտիյէ պատուանշան տրուեցաւ Սամսունի պեւքիական փոխ-հիւպատոս Պ. Քիրեօնիթի. — Ե. կարգի Մէհմէտիյէ՝ Հալէպի հիւանդանոցին բժիշկներէն դեր-հազարապետ Մէհմէտ Նազըմ էֆէնտիի և Տիգրանակերտի կուսակալութեան դիւանապետ Զիւլֆիեար պէյի. — Բ. կարգի Օսմանիյէ՝ զինուորական հաստատութեանց Ա. ճարտարապետ Ազնաուրեան Յովհաննէս էֆէնտի. — Արժանեաց ոսկի շքադրամ Սեւանիկի հրամանատար Ֆէրիդ Ալի փաշայի:

Աստիւանք. — Սանիյէի Բ. աստիւան տրուեցաւ Էնկիւրիի նահանգին քաղաքային բժիշկ Ալաէտտին էֆէնտի. — Սալիսէի աստիւան՝ Խորբերդի նահանգին Խտարէի ժողովոյ Ա. քարտուղար Հաճի Ահմէտ էֆէնտիի և Էտիրէի Սօֆըլու գաւառակի գայմագամ Մէհմէտ Ճէլալէտտին պէյի. — Սամիսէի աստիւան՝ Մաքրիդիլի հեռագրատան տընօրէն Սապիթ էֆէնտի:

— Թիֆլիսի «Նոր-Դար» ամենօրեայ լրագրոյ Խմբագիր-Հրատարակիչ Պ. ԸՍ-պանդար Սպանդարեան՝ տեղւոյն նահանգական դատարանին առջև դատի ենթարկուած է, գրաքննիչէն արգիլեալ դիտողութիւն մը հրատարակած լինելուն համար:

Ոճիւր մը ի Ե. Գարահիսար. — Սեբաստիոյ գաւառական թերթը կը ստա-

մէ թէ Նոյ. 21-ի կիրակի դիշերը, քաղքին թէք Գալագ անուն պողոտային վրայ, 37 տեղէն վիրաւորուելով ըսպաննուած գտնուեր է՝ քաղքէն միկ ժամ հեռաւորութիւն ունեցող Պուսաիտ գիւղին վարժապետը, Կարապետ Քէշիւեան: Կարապետ շարաթ երեկոյ մեկներ է, ըսելով իւր ընտանեաց թէ քաղքին վաճառականներէն և նախնական ատենի անդամներէն Ղարիպեան Հաճի Յակոբ աղայի տունը պիտի երթայ: Քաղքային ու գաւառական պաշտօնեայք, կառավարիչ Շաքիր էֆէնտի և այլ անձինք Ղարիպեանի տունն երթալով՝ կը խուզարկեն ու կը քննեն: Տան բակին, ախոռին ու պարտիզի դրան սեմոց վրայ, քարէ սանդուխին, պարտիզին մէջ գտնուած քարերուն և պարտէզէն դէպ ի դիակին գտնուած տեղը տանող դրան սեմոց վրայ կը նշմարուին արեան կաթիլներ, կը գտնուին արիւնոտ դոյքեր և արիւնոտ սարկի մը՝ որով տարուած լինել կը կարծուի դիակը: Բժշկական ժողովը կը հաստատէ թէ արեան այդ կաթիլներ ու բիծեր մարդկային արիւն են: Յակոբի սպասաւորին՝ Գէորգի աջ ձեռքը կապուած տեսնուելով, կը կասկածուի և կապը քակուելով կը տեսնուի որ երկու տեղէն դաշոյնի վերքեր և շապիկին վրան ալ արեան բիծեր կան: Յակոբն, եղբայրն ու ըսպատաւորն անմիջապէս ձերբակալուելով կը բանտարկուին:

Սեբաստիոյ գաւառական թերթը բնաւ չտարակուսելէ յետոյ թէ այս կարգի դէպք մը թշնամութեան և վրէժխնդրութեան արդիւնք է, կը պատմէ թէ Պուսաիտ գիւղի քահանայն Տէր Մատթէոս եկեղեցւոյն մէջ քարոզ խօսած պահուն վկասակար խօսքեր ըրած լինելով, վարժապետը իմաց տուեր է կառավարութեան, ինչպէս և խնացուցեր է թէ զինուորական տրոց տուամարին մէջ չարձանագրուած 35 մարդ կը գտնուի: Սոյն եղբրական դէպքը կատարուած է եղբր այս խնաց տրուելու խնդրոյն հետեանք:

— Կառաւակաց մէջ ընդհ. դատարանի օգնականաց պաշտօնը պիտի յանձնուի ոստիկան-զինուորաց կարող յիսնապետներու:

— Բնակալայր փոխելու գործը անձինք պարտաւոր պիտի լինին այսուհետև իրենց գտնուած թաղին իմամէն կամ Մուսթարէն ծանուցագիր մ'առնուլ և փոխադրուելիք տեղւոյն մէջ նախապէս կատարել տալ բնակավայրի փոխադրութեան գործողութիւնը:

— Ասանայի, Խարբերդի ու Բաղէշի նահանգաց ոստիկանաց արդի թուոյն վրայ հարկ տեսնուած է ոստիկանութեան հինգ գումիսէրներ և 14 ոստիկաններ աւելցնել:

— Խարբերդէն կը պաշտօնագրեն թէ Խալիլ անուն աւագակն և իւր երեք ընկերք ձերբակալուեր են, թէ՛ Քեախ-թէի Կէրկէր գիւղախմբին Աշիրէթնե-րու պետերուն միջև եղած թշնամութիւնը բարձուելով հաշտութիւն դոյացեր և այսպէս ապահովուեր է զիւղախմբին անդորրութիւնը, և թէ՛ Մալաթիոյ Հայոց երեւելիներէն Ատոր աղայի տունը գիւրաւառ նիւթեր ձգուելով, սենեկի մը առաստաղը միայն այրեր է և այս ոճրին հեղինակն եղող Հայերն ևս ձերբակալուելով քննութեան ենթարկուեր են:

— Հալիպոլի անտանարութեան վարժարանին համար Յրանայէ գնուած գործիներն մաքսատուրէ վերծ կացուցուած են:

— Շիրէքի Խալիլէն երկու չոգենաւուց շինութիւնն յանձնարարած է ի Կլասիօվ: Իւրաքանչիւրը պիտի արժէ 11,400 ոսկի:

— Կրքակաց նախարարութիւնը շրջաբերականաւ մը հրամայած է գաւառացի բարեկարգել նախնական վարժարանները, վարժարանէ զուրկ գիւղաքաղաքաց ու գիւղորէից մէջ վարժարաններ հաստատել, գաւառաց մէջ վարժապետանոցներու մասնաճիւղեր բանալ, ուսման ծաւալման համար ամէն միջոց ձեռք առնուլ և այս մասին տեղական հանգամանաց վրայ տեղեկագրեր ղրկել:

— Բրիցնը կեղեկելու համար գործարանի մը հաստատութեան արտօնութիւն խնդրուած է:

— 20 հաւաքահանակ շաքարի սընտուկի մը մէջէն գտած ու գրաւուած են ներքին տպարանաց մաքսատան պաշտօնեայք:

— Գասթամուքի ու շրջայից մէջ շարթուս առատ ձիւն տեղացեր է:

— Ամանորի առօրէ վեհ. Սուլթանը 400 Օսմ. ոսկի հաճեցաւ շնորհել Ազգ. Պատրիարքարանի: Նոյնպէս դրամական պարգևներ շնորհած է Յունաց և Հայ-Հռովմէականաց Պատրիարքարաններուն և Հրէից Բարեւարանին:

— Պարոնեանի ընտանեաց և որբերուն ի նպաստ, 569 Փրանք ղրկուած է Թիֆլիսէն, 12 1/2 անգլ. ոսկի Ամբրիկայէն:

— Մարոնիներու վարժարանին ի Հռոմ կառուցման ի նպաստ, վեհ. Սուլթանը 10 հազար Փրանք շնորհած է:

— Ճաքոնի ոստիկանութեան նախորդ նախարարն, որ մայրաքաղաքս կը գտնուի, այցելութիւն տուաւ Ոստիկանութեան վսեմ. նախարարին:

— Իեղազիւներու պատրաստութեան գնոյն համար սակագին մը յօրինել որոշուած է:

— Հացին օրինական գինը պահել տալու համար, մայրաքաղաքիս մէջ գտնուած ցորենի քանակութեան, փուռերու թուոյն և պատրաստուած հացերու քանակութեան մէկ վիճակացոյցը կը պատրաստուի այժմ:

— Մարդահամարի տուժարաց մէջ այսուհետեւ արձանագրուելիք անձանց Օսմանյէ թէզքէրէսին պիտի տրուի՝ եթէ պահանջողն իսլամ է՝ բնական թաղին իմամին ու Մուխթարին կողմանէ արուած ծանուցագրոյ մը վրայ, եթէ ոչ-իսլամ է՝ Պատրիարքարանց, Բարունակատաց կամ եկեղեցիներու թաղ. խորհրդոց կողմանէ, և եթէ խանի մէջ կը բնակի՝ սենեկապետներու կողմանէ արուած ծանուցագրոյ մը վրայ, այս վերջինը խանճիններու արհեստագետին կողմանէ վաւերացեալ լինելու պայմանաւ:

— Պրեսայի շերամարուծական ցուցահանդէսէն մրցանակ ստացող Հայերն են. — Ա. մաս՝ Գառնիկ Արսէնեան, Երուանդ Գուրեան և Գրիգոր Գալբաթեան էֆէնտիք: — Բ. մաս՝ Յովհաննէս Տէրվիշեան, Բարունակ Շիշմանեան, Ալիքաս Դուկասեան, Պամմաճը Օղլու Պօղոս և մայրը Մաքրուհի, Պամմաճը Օղլու Յակոբ և Լուծֆեան Յովհաննէս էֆէնտիք:

— Մահուան պատճոյ դատաւարտեալ անձանց նկատմամբ օրինական գործողութիւնները շուտով կատարել հրամայուած է ամէն կողմ:

— Մարզուանէն կը գրեն մեզ թէ վաղուց ի վեր տեղւոյն շրջակայքն ասպատակող և հարստահարող խումբ մը քիւրտ աւազակաց գլխաւորներէն երկուքն սպաննուել են և մին ողջ բռնուելով քաղաք բերուել է տեղւոյն ոստիկանապետ Կէօքմէն Չափուշի և իրեն հետեւող խումբ մը զինեալ ոստիկանաց ձեռամբ: Սպանեալ աւազակապետներն տեղւոյն «Պուզտայ Պազարի» հրապարակին վրայ թողուել են երկու օր, ի տես հասարակութեան:

— Նափայի դաշտին ոռոգման համար արուած խնդրագրոց մէջ, Ֆիլիպ Մելչամէ էֆէնտիի առաջարկներն ամէնէն նպաստաւորները նկատուել են:

— Էսիրէի մէջ եւս ճարակեր է քննարկուէնցան:

— Ներուպական բարակ ալի պատրաստութեան յատուկ գործարան մը մայրաքաղաքիս մէջ հիմնուել արտօնութիւն խնդրած են Անդրանիկ էֆ. և ընկերը:

— Կ. Պոլսոյ անգլ. դեսպան անուանեցաւ Մարտիտի անգլ. դեսպան Սըռ Բլաւ Ֆորտ:

— Ի Զմիւռնիա, 1891 տարւոյն մէջ պատահած հրդեհներէն ապահովագրա-

կան ընկերութիւնք 21,712 անգլ. ոսկի վնասեր են: 1890ին 27,125 ոսկի վնասուած են եղեր:

— Ի Հոսոս քերպարգելութեան դատաւարտուել է Պոլսեցի խալիլ անուն անձ մը, անվայել լեզու գործածած լինելուն համար:

— ՅԱՆՈՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ «Օրօս» անուն գրական և գիտական յունարէն հանդէս մը հրատարակելու արտօնութիւն ստացել է Գոսթաքի Վլախուրուս:

— Ի Գահիւրէ, վախճանեալ խալիվ թէֆիկի վաշայի յուզարկաւորութիւնը կատարուել է մեծ հանգիստ: Մարմինը ամփոփուել է խալիվական գերդաստանին յատուկ իմամը Շաֆիի թիւրպէն:

— Դասը գիւղի թրամուէյին արտօնութիւնը որոշուել է տալ Շիրինեան Միհրան էֆէնտի:

— Վանսլումայի ու Մըխալըճի միջև ճամբայներն աւրուել են անձրեաց պատճառաւ:

— Վալաքիոյ Հայ-Հռոմէականաց եկեղեցւոյն շրջակայքը գտնուող վատահամբաւ տունները վախել որոշած է ոստիկանութիւնը, ըստ խնդրանաց Հայ-Հռոմէականաց Պատրիարքարանին:

— Իզմիրի Բարչը-Եագայի երկաթուղին վերստին բանեցնել խնդրած է բաղմաստորագիր հանրագրութիւն մը:

ՌՈՒՍ ԿՂԵՐԸ

Փարիզեան լրագիր մը կը հրատարակէ հետեւեալ օրինակն այն վկայաթղթոց զորս ռուս կղերը սովոր է տալ մեռնելու մօտ եղող ականաւոր անձնաւորութեանց:

«ՄԱԿԱՐԻՈՍ, արքեպիսկոպոս Քիէվի և հանուրց Ռուսաստանեայց, առ մեր տէրն ու բարեկամ՝ Սուրբն Պետրոս, դռնապան Աստուծոյ Ամենակարողի: Ներկայիւս կը վկայեմք Քիւր թէ այսօր վախճանեցաւ Տեառն ծառայ ոմն իշխան Վլադիմիրսքի անուն: Կը յանձնարարեմք Քիւր որ զինքն անյապաղ մոցնես Աստուծոյ թաղաւորութեան մէջ: Բան մը ընդդէմ չէ որ թոյլ տաս նմա անցնելու, և ներկայիւս արձակման գիր տուած եմք նմա:»

Ամենախոնարհ

ՄԱԿԱՐԻՈՍ

Արքեպիսկոպոս Քիէվի եւ հանուրց Ռուսաստանեայց

Ս. Թ. Է. Ք. Դ. Բ. Ա. Մ. Ո. Յ.			
Օսմ. լիւան 100 ղըշ. էն			
Մէճիւիյէ	108	8 Վ. Ե. Ե. Ե.	102 20
Քառարդ մէճիւ	106	30 Ռուսիոյ բօլ	89 15
Մանր մէճիւ	101	10 Ն. Բ. Ե. Ե.	87 5
Մէթալիք	97	20 Գ. Բ. Ե. Ե.	51 40
Հինգեւոց	101	10 Ա. Ե. Ե. Ե.	109 30
Մանէթ թղթադրամ 9 33			
Գոնոյիւտէ	20	10 Ռուս. երկ.	70 1/2
Թահվիլ Օսմ.	77	15 Թաւաղիյէ	22

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ՄԱՂԻԿ»

Հ. Կ. Ք. Մարզուան. — Ձեմք ըստացած Ձեր յիշած յունիս 28 թուակիր նամակը:

Ա. Հ. Իզմիր, Անը-Պասէմ. — «Նիկար Ա. տարի» 35 ղըշ:

Տ. Փ. Նրգնկա. — Ստացանք փոխանակադիրն և գանձեցինք:

Ազգ. վարժ. ի Մաղնիսա. — Անցեալ տարւոյ նուիրատուն այս տարի ևս վարժարանիդ նուիրած է մի օրինակ տարեկան «Մաղիկ»:

Նարհիմ, Իսկիւսար. — Կը խնդրուի միակերպ և կարճ թուղթերու վրայ գրել:

Յ. Թ. Մարզուան. — Ձէ չահած:

Մ. Ա. Ի Կարին. — Ա. Բ. ի Սուչօվա, Ա. Գ. Փ. ի Նօզլաս. — Ղրկեցինք:

Ս. Յ. Նիքսիա. — 16 հօդա. ին գըրած էիք և Գ. ին յանձնեցինք 50 թ. Նախ. և 50 թ. Ա. մասն: Այժմ դեկտ. 18 նամակաւ կը խնդրէք որ նոյն գիրքերէն նոյն քանակութեամբ, նոյն պայմաններով նոյն տեղն յանձնեմք: Ձեր առաջին նամակը կը կրկնէք թէ՛ նոյն քան մ'ալ կ'ուզէք նոյն գրքերէն:

Թ. Ղ. Այնթապ. — Շնորհակալ եմք բայց ո՞վ էք դուք և ի՞նչ գործով կ'ըզբաղիք. հաճեցէք ծանօթացնել զՁեզ:

Մ Ե Ս Ր Ո Պ Ն Ո Ւ Պ Ա Ր Ե Ա Ն

ԲԱՌԱՐԱՆ

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅ-ԱՇԽԱՐՀԻԿ

(Պաղտատեան Տպագրութիւն)

Գոհութեամբ կը ծանուցանեմք թէ սոյն ընդարձակ բառարան, այնչափ գովեստիւք գնահատեալ շատ մը ձեռնհաս անձերէ, աւարտած է բոլորովին:

Իւր ճոխագոյն սարունակութեամբ, հայերէն համանշանակներու ճշդութեամբն, շատ մը նորակերտ և գաւառական բառերովն և ճշգրտաբար բազմաշատ հեղինակին սոյն երկն անհրաժեշտ գործի մ'է թէ՛ թարգմանչաց, թէ՛ ուսանողաց, և թէ՛ առ հասարակ ամէն անոնց որք կ'ըբաղին ֆրանսերէն լեզուով:

Գործոյն կարեւորութեան կը համապատասխանէ նաև տպագրութիւնն, որ Պաղտատեան տպարանի խնամեալ արտագրութեանց մին է և կը կազմէ ըստուար և գեղեցիկ հատոր մը, ճոխագոյն մատենագրարանաց մէջ ընտիր տեղ մը գրաւելու արժանի:

Մինչեւ յառաջիկայ յունուար 20, որոշուած է անիովիս պահել նուարեան Բառարանին գինը, 20 ֆրանք:

Գաւառներէն ուղղոյնքը պէտք է դիմեն «Մաղիկի» Յանձնակատարութեան Գրասենեակին. Փօստի ծախուց համար ծովեզերեայ քաղաքներէ պէտք է ղրկել 6 ղըշ, ներքին քաղաքներէ՝ 8 ղըշ:

19)

Մ Ե Ռ Ե Ա Լ Կ Ի Ն Ը

— Այդ վարմունքն արժանավայել է ձեզ, ըստ Պեռնառ. Բայց դիտել պիտի տամ ձեզ որ օրիորդ Սապին հազուադիւս խնայականութեան տէր աղջիկ մ'է... Իրեն նման կանայք բացառութիւններ միայն պիտի կրնան կազմել:

— Ընդհակառակը ես կը կարծեմ որ Սապինի մտաւորական և բարոյական տիպարն, զոր անշուշտ ներկային մէջ բացառիկ է, դեռաւոր աղջկան գրեթէ ընդհանուր տիպարը պիտի լինի մօտաւոր ապագայի մը մէջ... Պէտք է այդ յայտն ունենալ, եթէ չեմք ուզեր ընդունիլ անհաւանական ենթադրութիւնն ի դարձ յայտնեալ կրօնի մը, քանզի՝ այս երկու պայմաններէն դուրս՝ ամուսնութիւնն, որ ընկերական պահանջ մ'է, պիտի դադրի դոյութիւն ունենալէ:

Տօքթէօր Թալլըվօ և Պեռնառ Սապինի մօտ հասան որ իւր ողջոյները մատուցանելէ վերջ առ Ալիէթ, վանդակապատին առջև անոնց կ'ստատէր:

Օդը միշտ գեղեցիկ լինելով, օրիորդ Թալլըվօ նախամեծար համարած էր հետիոտն դառնալ: Ուրեմն նոքա այսպէս մեկնեցան Լա Սօլէյի ուղղութեամբ, և Պ. տը Վօտուիգուռ մինչև ճամբուն կէսն ընկերացաւ իւր հիւրերուն: Երբ ետ դարձաւ, Սապին ժամանակ մ'եւս իւր պաշտպանին քովէն լսին շարունակեց իւր ճամբան. յետոյ յանկարծ իւր ճայնին ծանր և ներդաշնակ հնչիւնը մեղմիւ արձագանգ տուաւ գիշերուան լուսութեան մէջ:

— Հօրեղբայր իմ, ըսաւ, կը վախճամ որ մի գուցէ տիկին տը Վօտուիգուռ ծանրապէս հիւանդանայ. դուք ալ այնպէս չէք խորհիր:

— Բայց, չէ, աղջիկս, փառք Աստուծոյ, այդպիսի ոչինչ բանէ մարդ չը մեռնիր:

— Քիչ մ'առաջ այն աստիճան երկարատեւ և կատարեալ նուազում մ'ունեցաւ որ վախցայ:

— Այո՛... նուազման պէս ահագին բան չկայ և սակայն երբ ներքին ո և է հիւանդութիւն չկայ, ծանր արկած մը չէ այդ: Տիկին տը Վօտուիգուռ սրտի հիւանդութիւն չունի. ունեցածը արեան պակասութիւնն է պարզապէս:

— Բայց, հօրեղբայր իմ, միթէ չկարգացի չգիտեմ ուր թէ սակաւարիւնութեան մի քանի պարագայներ մահաբեր հետևանքներ կ'ունենան:

— Տարակոյտ չկայ... տեսնուած են այդ հիւանդութեանէ հիւսնակներ որք յանկարծ մեռած են նուազման մէջ... բայց այսպիսի դէպքեր խիստ հազուադէպ են, և Տիկին տը Վօտուիգուռ կազմուածքն ունեցող անձի մը համար, գրեթէ անկարելի է...:

— Սակայն ինքը կ'ըսէ թէ այս արկածներուն արդէն ի վաղուց ենթակայ է...:

— Այո՛, հէ՛ք կին, յոյժ մոտտանջ է... ցնորական բաներ կ'երագէ:

— Ուրեմն անհանգիստ չէք իւր նկատմամբ:

— Բնաւ երբէք, մինչև ցարդ:

— Աւելի լաւ, հօրեղբայր իմ:

Լա Սօլէյի վանդակապատին առաջ հասած էին և իրենց ստուերներն աներևոյթ եղան մեծ ուռենիներէն կազմուած խոր մթութեան մէջ:

Նոյն շարժումն վերջ, Բարիզու մի քանի բարեկամք, եղանակին գեղեցկութենէն հրապուրեալ, կուգային անցունել երեք կամ չորս օր ի վալմութիէ: Կարաւանին գլուխն էր անցած Պեռնառ և Ալիէթի վաղեմի բարեկամուհին՝ Գաս-

թէլ-Մուէլ դքսուհին: Ալիէթի և իւր ամուսնոյն նամակներէն խնայած էր բնականաբար փոքրիկն փանի հիւանդութեան և նորա զարմանալի բժշկութեան պարագայները: Հագիւ թէ վալմութիէի դղեկն հասած էր, հետաքրքրութիւն յայտնեց ճանաչելու այն մանկամարդ դրացուհին որոյ տարօրինակ անձնավորութիւնը նկարագրած էին իրեն:

— Հապա ձեր գեղանի Հրէուհի՞ն, ըսաւ Պեռնառ, չը պիտի տեսնենք զնա:

— Ի՞նչ Հրէուհի, սիրելի դքսուհիս:

— Բայց այն աղջիկն որ դարմանեց զփան:

— Օրիորդ Թալլըվօն... բայց Հրեայ չէ նա:

— Իրա՞ւ կ'ըսէք, ես Հրեայ կը կարծէի զինքը, հաւանականաբար այն փաթեցաւոր գեղանի Հրեայ կանանց պատճառաւ որք միջին դարու մէջ բժշկութիւն կ'ընէին և վիրաւորեալ հեծեւազօրաց վերքերը կը պատէին, ինչպէս Ռէֆէկա՝ Իվանհոյէի մէջ: Վերջապէս, Հրեայ կամ ոչ, հետաքրքիր եմ տեսնելու զնա... միթէ կարելի չէ՞:

Դքսուհւոյն հաճոյք պատճառելու համար, կառք մը զըրկուեցաւ ի Լա Սօլէյ, տօքթէօր Թալլըվօի ուղղեալ փոքրիկ նամակաւ մը զոր Ալիէթ ինքն իսկ շարագրած էր: Ալիէթ ներում կը խնդրէր այս նամակաւ որ անգամ մ'եւս կը հեռացնէր իրմէ իւր եղբոր դուստրը, փափաքելով ծանօթացընել զնա մի ազնիւ կնոջ որ եկած էր սիրալիր այցելութիւն մը տալու իրեն:

Սապին հասաւ կէս օրէն վերջ, և վալմութիէի հիւրերուն մօտ գնահատուեցան իւր գեղեցկութիւնը և բնատիպ ազնուութիւնը:

— Ստաբարոյ Աստղիկն էր, ըսաւ դքսուհին:

Եւ սակայն, տիկին տը Վօտուիգուռ, զոր իւր տանտիկնոջ պարտականութիւնը յայտնապէս յոգնեցուցած էին, յաջորդ օրուան առաւօտ քունէն ելած պահուն մարելիք ըզգաց և ստիպուեցաւ տօքթէօր Ռէյմոնի հրամանին վրայ սենեակը մնալ: Յորեկը, իւր մօտ ընդունեց միայն իւր ամուսինը, օրիորդ Թալլըվօն և դքսուհին, որ՝ ձանձրանալը չսիրելուն համար՝ նոյն երեկոյին իսկ Բարիզ մեկնեցաւ իւր հետ բերած անձանց ընկերակցութեամբ:

Օրիորդ Թալլըվօ ինքն եւս կը պատրաստուէր իւր հօրեղբոր մօտ դառնալու, երբ՝ մեկնելու վայրկեանին՝ Ալիէթ կրկին անգամ նուազման մէջ ինկաւ, նուազում՝ որ բաւական երկարատեւ եղաւ և մեծ երկիւղ պատճառեց ամուսնոյն: Պ. տը Վօտուիգուռ Թալլըվօն խնդրեց օրիորդ Սապինէ դղեկին մէջ մնալու, և չհամարձակելով մարդ դղեկ կանչելու զՏօքթէօր Թալլըվօ որոյ ցոյց տուած հաճոյակատարութեան հակառակ՝ զնա տաղտկացնելէ կը վախճար, կանչել տուաւ զՏօքթէօր Ռէյմոն: Պ. Ռէյմոն ստուգեց թէ այս վերջին սաստիկ նուազումը սովորականէն աւելի տկարացուցած և անկանոն ընթացքի մէջ դրած էր հիւանդին զարկը: Այսու հանդերձ նորա վիճակին վրայ կասկածելի և ոչ մէկ նշան տեսաւ, պատուիրեց միայն փոխն ի փոխն շարունակել — քանակութիւնները մի քիչ աւելցնելով — այն զօրացուցիչ և հանգարտեցուցիչ դեղերը զորս տիկին տը Վօտուիգուռ կը գործածէր և որոց գլխաւոր տարրերը կը կազմէին քինքինայի գինին, եթերն և վալեռիանը:

Հետեւեալ օրը, թէ և տիկին տը Վօտուիգուռ կրցաւ անկողնէն ելնել, բայց և այնպէս մասնակի նուազումներ դարձեալ պատահեցան օրուան մէջ, յուզման և խորին անհանգըստութեան ընդհատմամբ: Երեկոյեան մօտ, կրկին անգամ ինկաւ կատարեալ նուազման մէջ, յորմէ դժուարաւ կարելի եղաւ սթափեցնել զնա: Երբ ուշաբերեցաւ, իւր աղջիկն ուղեց զոր չէր տեսած նախընթաց երեկոյէն ի վեր, ժպտեցաւ նմա՝ մեղմիւ երերցնելով իւր տկար գլուխը, ընդ երկար ողջագուրեց զնա, և ըսաւ իւր աղջկան՝ որ բոլորո-

վին զարմացած էր իւր մօր սյուրից վրայ արտասուեաց կաթիլներ տեսնելով։

— Գնա՛, խաղա՛, սիրուն զաւակս։

Պ. տը Վօտուիգուռ և Սապին, գործօն աջակցութեամբ պառաւ Վիգթուռուի որ միշտ ներկայ էր, տիւ և գիշեր կարգաւ կը հսկէին Ալիէթի սենեկին մէջ, հաւասար անձնուիրութեամբ կը դարձանէին զնա, ջանալով կեղծել նմա մտայ կատարեալ հանդարտութիւն։ Սակայն Պ. տը Վօտուռու մեծապէս կ'սկսէր վրդովիլ ի խոր սրտէ և Սապինի հետ մի քանի վայրկեան խորհրդակցութենէ զինի։

— Բայց վերջապէս, օրիորդ, ըսաւ նմա, վստահ էք թէ սխալած չեմք։ Ես բացարձակ վստահութիւն կրնամ ունենալ միայն տօքթէօր Թալլըվօ քննութեան վրայ... և, սակայն, չեմ կարող չտեսնել մեծ վտտիտութիւններ... մեծ այլայլում մը... իւր դիմաց վրայ... դուք ալ նոյն բանը չէք տեսներ։

Ո՛հ, պարոն, պատասխանեց օրիորդ Թալլըվօ, ո՛չ այլ ինչ կարող եմ... Եթէ ոչ յիշել և կրկնել ձեզ զոր ինչ հօրեղբայրս կ'ըսէր ինձ երկու օր առաջ։ Հիւանդին և ոչ մէկ գործարանը վնասուած է, և առանց պատճառի մարդ չը մեռնիր։

Սապին դղեկին պարտիզին մէջ առանձին թողուց զՊեռնառ, որ քիչ մը ժամանակ մեծաքայլ շրջեցաւ անդ։ Յանկարծ վանդակապատին դռնէն ներս մտնելը տեսաւ Վալմուրիի երէցին որ զգալի աճապարանքով մը կը հասնէր։

— Թշուառակա՛ն, դռն կանչել տուիր քահանայն, գուշեց ուժգին։

— Այո՛, պարոն, պատասխանեց Վիգթուռու, հանդարտութեամբ անոր նայելով։

— Միթէ տիկինը ինքն ուզեց որ քահանայ կանչուի։

— Ո՛չ, Պարոն, բայց ինչ որ ալ ըսեն, հիւանդը շատ գէշ վիճակի մէջ կը գտնեմ ես...։

— Բայց, թշուառակա՛ն, դռն իսկ պիտի մեռցնես զինքը, այդպէս յուզում պատճառելով իրեն։

Վիգթուռու տակաւին չէր պատասխանած, երբ օրիորդ Թալլըվօ յանկարծ երեւելով բակին շէմին վրայ, իսկոյն վերջ գտաւ այս վէճն։

— Պարոն, ըսաւ Սապին, փոքր ինչ յուզեալ ձայնիւ, պարտք կը համարիմ խնդրել որ անյապաղ մարդ զրկէք հօրեղբայրս կանչելու։

Պ. տը Վօտուիգուռ արագ հայեցումաւքով հարցափորձեց զնա և տխրալից բացադանչութիւն մ'արձակեց, ուժգնապէս ձեռքերը միմեանց վրայ բերելով։ Սպասուոր մը անմիջապէս իւր հրամաններն ստացաւ և ախոռատուն վազեց։

Յայնժամ Վալմուրիի երէցին դառնալով,

— Տէր երէց, ըսաւ նմա, հաճեցէք ինձ հետ իւր... բայց թոյլ տուք խնդրեմ որ նախապէս կնոջ իմացնեմ։

Երէցը իւր հաւանութիւնը յայտնեց խոնարհեցնելով իւր գլուխը։

Պեռնառ Ալիէթի սենեակը ելաւ։ — Իւր երկար աթոռին վրայ պառկած էր նա, և կարծես կը մրափէր։ Կէս մը բացաւ իւր աչեր, երբ ամուսինը ներս մտաւ։

— Սիրելի Ալիէթս, ըսաւ նմա Պեռնառ, բռնելով նորա ձեռներէն մին. քիչ մը տուա՞յ յանդիմանեցի Վիգթուռու. յիրաւի այդ պառաւը խեղճ սկսեր է կորսնցնել...։ Հակառակ բժշկաց տուած կրկին ու կրկին ապահովութեանց, նա ահաբեկ եղած է՝ զձեզ այսօր քիչ մը աւելի տառապեալ տեսնելով, և մեր երէցը կանչել տուեր է...։ Կ'ուզէ՞ք ընդունիլ զնա։

— Ո՛հ, խնդրեմ, անշուշտ։

Ալիէթ դժուարաւ հառաչեց և իւր ամուսնոյն վրայ յառեց իւր մեծ կապոյտ աչերն՝ այն աստիճան կսկծեցուցիչ և արտասովոր սրտի անձկութեամբ լեցուած, որ Պ. տը Վօտուռու մինչև իւր ոսկերաց ուղեղը ինքզինքը սառած զգաց։ Չկրցաւ ինքզինքը զսպել խորին յուզմամբ մը ըսելէ անոր։

— Միթէ այլ եւս զիս չէ՞ք սիրեր, Ալիէթ։

— Մի՛շտ, միմիջեց խեղճ կինը։

Պեռնառ երկար համբոյր մը դրոշմեց նորա ճակատին։ — Ալիէթ տեսաւ որ արտասուեաց կաթիլներ դուրս կը ցայտէին իւր ամուսնոյն աչերէն, և ապաւ իրեւոյթ մը տուաւ։

Պեռնառ խոյն դրան մօտեցաւ, նշանացի ներս հրաւիրեց երէցը որ սանդուղին վրայ իրեն կ'ապասէր, և ինքը հեռացաւ։

Օրհասական կէս ժամու չափ, Պ. տը Վօտուիգուռ դղեկին մեծ սրահին մէջ շրջափայեցաւ, մէն մի վայրկեան կանգ առնելով պարտիզին վրայ բացուող պատուհաններուն առաջ։ Օրիորդ Թալլըվօ, լսին և յոյժ գուռաւոր, ջահակալի մը մօտ նստած էր, արմկամբ նորա վրայ յենած իւր սովորական կացութեան մէջ, գլուխն ալ ձեռացը մէջ առած։ Մերթնդ մերթ, Պեռնառ իւր յուզման մէջ կիսկտուր և զրթուարիմաց խօսքեր կ'արտասանէր։

— Բայց կարելի չէ... ի՞նչ բանէ պիտի մեռնի... կայծակէ՞ զարնուած է միթէ... ո՛չ, կարելի բան չէ։

— Հօրեղբորս սպասե՛ք, կ'ըսէր Սապին պարզօրէն։

Եկան իմացնել Պ. տը Վօտուիգուռի, ինչպէս արդէն պատուիրած էր, թէ երէցն իւր կնոջ սենեկէն հեռացեր էր։ Անմիջապէս անդ վազեց և Սապին հետեւեցաւ նմա։ Բայց Ալիէթ որ յոյժ մտայուց կ'երեւէր, կարծես չտեսաւ զանոնք։ Սակայն և այնպէս իւր ամուսնոյն ձեռքէն տուաւ այն ըմպելի դեղը զոր սա կը ներկայացնէր իրեն։ Վիգթուռու յայտնեց Պեռնառի թէ երէցն՝ հիւանդին խնդրանաց համաձայն՝ մի քիչ ուշ, երեկոյեան մօտ, դարձեալ պիտի գար հոգեւոր խորհուրդները կատարելու։

Ժամը եօթնին միջոցները տօքթէօր Թալլըվօ հասաւ։ Հազիւ թէ Ալիէթի մօտեցած էր, ապաւթեան արտայայտութիւն մը գծուեցաւ իւր դիմաց վրայ, որպէս արագընթաց ամպ մը։ Յետոյ իսկոյն կրկին գտնելով իւր արհեստին յատուկ անկարեկցութիւնը, վեր առաւ դեռատի կնոջ ստանապատ բազուկը, զարկը նայեցաւ որ հազիւ զգալի էր, վայրկեան մը նկատեց նորա գունատ դիմադժերն և կիսաբակ աչերն, և դէպի անոր ծռելով, յոյժ գորովալից և յոյժ զգայուն քաջալերական մի քանի բառ միմիջեց, այնպէս որպէս թէ տղու մը ուղղած լինէր իւր խօսքերը։

Յայնժամ հիւանդին սենեկին կից առանձնոցի մը մէջ տանելով զՊեռնառ և ուժգին նորա ձեռքը սեղմելով,

— Պարոն, ըսաւ, ներողութիւն կը խնդրեմ ձեզմէ. ահա ելի է ինչ որ պիտի ըսեմ ձեզ... բայց իմ թշուառական գիտութիւնս սխալած է... և այժմ անկարող է բան մը ընելու... մեռնելու մօտ է ձեր կինը...։

Ազաղակ մը թնդաց սենեկին մէջ. յետոյ հեծեծանաց դռնէն մը։

Պ. տը Վօտուիգուռ դուրս նետուեցաւ բոլորովին խեղագարած...։

Ալիէթ ոչ եւս էր։

(Շարունակելի)

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԹԵՅԵՐՈՒ ՆԻԳՕԼԱ ԵՒ ԲՕԼ ՍՄԻՐՆՕՅԵ ԵՂԲԱՐՑ

Ղալաթիա, Ռուսական վանքին դիմաց, Այնիգօլա եկեղեցւոյն մօտ, Թիւ 30

Վաճառատունս՝ անցեալ տարւոյ Մայիսի սկիզբները բացուած լինելով, վաճառելի թէյերու տեսակներն եւ գիններն ի ստորեւ նշանակեալ, կը ծանուցանէ ի գիտութիւն յԱրգոյ հասարակութեան։

Թիւ 1. Լիանսին	Ֆունթ 32	Դահեկան
» 2. Չինական վարդ	» 30	»
» 3. Պուքէ Էմբէրիալ	» 26	»
» 4. Ֆուչէֆու	» 20	»
» 5. Տնական թէյ	» 16	»
» 6. Խնայողական տեսակը	» 12	»

Վերոյիշեալ թէյերը՝ մէկ, կէս եւ մէկ չորրորդ ֆունթնոց (133 տրամ) ծրարներու մէջ ամփոփուած՝ մետաքսեայ եւ կապարեայ թղթով պատած, իրենց վըրայ կը կրեն վաճառատան կնիքն եւ ստորագրութիւնն։ Սոյն թէյերը չաւրուելու համար մթերանոցին մէջ մասնաւոր տեղ մը գրաւած են, ուր արգիլուած է նոյն իսկ ծխելն։

ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂԾԵՐԷՆ

Անոնք որ կրնան որոշել թէյին լաւն ու վատը, կարող են իրր նմոյշ գնել վաճառատունէս փոքր ինչ եւ փորձել։ Վաճառատանս միւս ճիւղն, որ ի Ռուսիա աշխարհածանօթ է արդէն։

Սոյն թէյեր կը վաճառին նաեւ ի Բերա, Թիւնելի դիմաց Ֆրաթէ վաճառատունը, Պոլիս Պահէէ գարու Շէյիսի լիւսլա խան թիւ 2 Միւսիւ Նիքիթիչ Էրպէնկին մթերանոցը, Օրթագիւղ Թաշ Նէրտիւսյան փողոց թիւ 5 Պ. Գրիգոր Միսկճեանի գեղարանը, Իւսկիւտար Թաշ Տէմիրճիլլի փողոց թիւ 25 Միւսիւ Ա. քէստօրիսիսին գեղարանը եւ Գատըգիւղ Նպարավաճառ Բարաթանասիօին մթերանոցը թիւ 19։

(8—18)

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԵՅԻ

Կ. ՆԱՎՐԱՌԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼՅԱՆ ԸՆԿ.

Պահմէ—Գարու, ձէլալ պէյ խանի դրան կից, Թիւ 10

Զմեռուան առթիւ սոյն հանրածանօթ վաճառատան մէջ պատրաստ կը գըտնուին Չինեյ եւ Ճաւայէ ուղղակի հասած նոր բերք՝ զանազան տեսակ գերընտիր եւ ազնիւ ու անուշաբոյր ամէն ճաշակի յարմար։ — Կաղանդի նուէրներու համար՝ թէյով լեցուն ծարրնական, Չինական եւ Հնդկական այլ եւ այլ մեծութեամբ եւ ձեւերով գեղակերտ եւ նկարազարդ տուփեր։ — Յաճախորդաց գոհացում տալու համար ընտելանք չը խնայուիր։ — Յանձնարարութիւնք կը կատարուին փութով եւ ճշգրտութեամբ։ — Գինները որոշ եւ խիստ չափաւոր։ — Զի՛ք սակարկութիւն։

(2—4)

ԿԱՐԱՊԵՏ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Վաճառատուն Գէսի եւ Թօհաֆիէի

Կ. Պոլիս, Պահէ-Գարու, Հաֆիէ հարդիսի, շաքար-ճաշու հաֆի Պէլիս-ալայի խանութի գէմայէ կողմ, Թիւ 54

Ընտիր Փէսեր ամէն տեսակէն, Պէզիկի եւ այլ խաղի թղթեր եւ մարքէթ։ Ճաշակաւոր քուսաթներ, թաշկինակ, գուլպայ, հոտաւէտ նիւթեր, բորթմանէ, հովանոց, գաւազան, լաստիկ—կալըշ, եւ այլն։

Ճաշակաւոր ընտիր ապրանքներ չափաւոր գիներով։

9—12

—o—

ՆՈՐ—ԴԱՐ

Ամենօրեայ Լրագիր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Ի ԹԻՖԼԻՍ

Տէր Է. Խաչիկի Սպանդար Սպանդարեան Յառաջիկայ 1892ի սկիզբէն կը մտնէ իւր իններորդ տարին

Թուրքիոյ, Եւրոպոյ եւ Ամերիկայի համար բաժանորդագիրն է (ճանապարհի ծախսով) 40 Փրանք։

Խմբագրութեան հասցէն՝ Rédaction du journal «Nor-Dar»

TIFLIS (Caucase)

ԿԻՒՆ ՏՕՂՏՈՒ

Սուլթան համամ, Ֆնտգլեան խան, 41

Եւրոպոյէն նոր բերուած հետեւեալ ապրանք կը վաճառուին 12 դրուշ 30 փարայի։

1 Գծաւոր բրդեայ արանց ֆանելա։
3 Զոյգ կապարագոյն բրդեայ արանց ֆանելա։

1 Հատ գունաւոր բրդեայ կանանց ֆանելա։

2 Զոյգ կապարագոյն բրդեայ կանանց գուլպայ։

1 Հատ Բրօֆ. Ժաքէրի դրութեամբ ներքնաշաւիկ։

1 Հատ Բրօֆ. Ժաքէրի դրութեամբ ներքնաշաւիկ։

1 Անգլ. կոտաէ օձիքով ու թեւնոցով արանց շաւիկ։

3 Արանց շաւիկի նորածեւ ճերմակ կուրծք։

6 Արանց շաւիկի նորածեւ օձիք։

3 Զոյգ քիտնէ շաւիկի թեւնոց։

1 » մէջը ֆանելայով ձեւնոց։

1 Հատ գունաւոր արանց ֆանելայ վարարիք։

1 Հատ բրդեայ կանանց ուսնոց։

1 » բուրդէ հիւսուած կանանց ծածկոյթ։

1 Հատ գունաւոր բրդեայ տղոց չըր-ջագգեստ։

1 Հատ բրդեայ տղոց բաճկոնակ։

2 » ամենալաւ տեսակէն մետաքսեայ փողկապ։

12 Հատ գունաւոր կամ ճերմակ քիտն թաշկինակ։

6 Հատ գունաւոր երեսի սրբիչ։

4 » կարմիր գծաւոր խաւու։

3 » շատ մեծ ոտքի խաւու։

4 Հատ ծայրերը գունաւոր ծաղիկէն կար քիտն խաւու։

3 Հատ ծայրերը չինուած լաւ քիտն խաւու։

6 Հատ գունաւոր քիտն սրբիչ։

1 » մետաքս կամ բուրդ կանանց լասթիքի ֆանելայ։

1 Զոյգ շատ երկայն անգլ. շղարչէ վարագոյր։

1 Հատ մետաքս տուփի մէջ 2 լաւանտա, 1 օճառ, 1 օտը քօլօներ։

6 Հատ շուրջը գունաւոր կանանց քիտն թաշկինակ։

4 Հատ լաւ տեսակ արանց քիտն թաշկինակ։

6 Հատ շուրջը անթիքայով ճերմակ կանանց թաշկինակ։

6 ծաղիկէնկար տամասէ անձեռոց։

1 Հատ ծոպերը չինուած 8 հոգինոց սեղանի ծածկոց։

6 Անգլ. արծաթէ ապուրի դգալ։

3 Հատ դանակ եւ 3 պատառաքաղ։

2 » Գոյնաւոր լամպի ֆանելայ։

2 Զոյգ գծաւոր բրդեայ կանանց գուլպայ։

3 Հատ կիտն մետաքսէ գունաւոր թաշկինակ։

2 Հատ շատ մեծ քիտնէ խաւու։

2 » լաւ տեսակ գալ մետաքս թաշկինակ։

6 Հատ Անգլ. արծաթէ սուրճի կամ անուշի դգալ։

3 Բրդեայ-լասթիքի տղու գուլպայ։

Եւրոպոյէն նոր բերուած հետեւեալ ապրանք կը վաճառուին 12 դրուշ 30 փարայի։

1—12

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԱՇՆԱԿԱՅ
ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆ

Վկայեալ դաշնակայարդար էմուրի
հռչակաւոր գործատան

Գնուէմ եւ վաճառուէմ

Փոխանակուիրէն հին դաշնակայաց հետ

Կը վաճառուին ամէն տեսակ դաշ-
նակներ ամսական վճարմամբ եւ մասնա-
ւորաբար Գաղղիոյ լաւագոյն գործա-
րաններէն Քլէնի դաշնակները, խիստ
գիւրամատչելի գիներով:
Մասնաւոր յանձնարարութեամբ ամէն
գործարանաց դաշնակներէն կը բերուին:

Վարձու նոր դաշնակներ չափաւոր
գիներով:

Բաժանորդագրութիւն դաշնակաց
յարգարման (accord):

Դաշնակաց նորոգութիւն, գաղղիական
ընտիր նիւթեղէններով:

ՀՐԱՀԱՆԳ դաշնակները չհինցնելու
եւ լաւագոյն վիճակի մէջ պահելու:

Գաւառներէ եղած յանձնարարու-
թիւնք ամենայն խնամով եւ փութով կը
կատարուին:

Անմրցելի աժանութիւն

Աւելի մանրամասնութեանց համար
դիմել Բերա, Մեծ-Փողոց, Ղալաթա
Սարայի դիմաց, Նրիսթաքի խան,
թիւ 10: (12—30)

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԱԿԱՌՈՒՂԵԱՅ

132րդ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ
տեղի պիտի ունենայ յառաջիկայ Յուն-
ուար 20ին: Մեծ պարգեւն է,

300.000 ֆրանք

Գին բաղդատումն 7 1/2 դրուշ:

Գաւառներէն ստանալ փափագողք
կարող են դիմել Եմաղիկի Յանձնա-
կատարութեան Գրասենեակին, տու-
նակի գնայն հետ զրկելով 40 փարա ա-
ւելի փոստի ծախսուց համար: Գրասեն-
եակը պատասխանատուութիւն չստանձ-
ներ, եթէ պատահի որ զրկուած նամա-
կը ճանրան մուրրի եւ տիրոջը ձեռքը
չը հասնի: Տոմարին տալահովազրեալ
նամակով ստանալու համար, պէտք է
40 փարայի տեղ 90 փարա աւելի շրկել:

ԱՐՏԵՆԱՏԻՐ Ա. ՍԱԲԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՏԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Լսկի-Չապփէ Կողոց, Թիւ 6

ՅԱՆԷԼԱ ԱՊՐԱՆԱՅ ՀԻՒՍՍՐԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՍԼԱՆԵԱՆ ԵՂԲԱՐՑ

Ի Մանմուտ փաշա, Բիւրքնի խան, Թիւ 26 եւ 15, որոյ մասնաճիւղն է
Ի Պահչէ—Գաբու, Մաքսատան կարգ, Թիւ 44 Թօնաֆիյէի վաճառատունը:



Թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր քա-
նակութեամբ՝ արանց, կանանց
եւ տղայոց համար՝ անխառն
բրդէ, մանածէ, եւյլն, ուզ-
ուած թանձրութեամբ եւ ուզ-
ուած չափով յանձնարարու-
թիւնք կ'ընդունուին ու պատ-
րաստ կը ծախուին ֆանէլա
չապիկներ, վարտիքներ, մի-
սոցուններ, եւյլն: Ապ-
րանքները կը մրցին եւրոպա-
կաններուն հետ թէ՛ աժանու-
թեամբ, թէ՛ գիւրամատչելու-
թեամբ եւ թէ՛ իրենց նուրբ
ճաշակով: Յաճախորդք ամէն
կերպիւ գոհ պիտի մնան:

10—12

Մոքրատեան Մկրտիչ եւ Յովնանեկս կողքաց փաճառատունը

ԵՐԿԱԹԻ, ԽՈՒՐՏԱՎԱԹԻ, ԳՈՐԾԵԱՅ ԵՒ ԱՅԼՈՑ

Կ. Պոլիս, Ալանա Համամ, Թիւ 44 եւ Ղալաթիա, Բէրշէմպէ բազար,

Մանմուտից—Ճատտէսի, Թիւ 70 եւ 59:

Աճողիական, գաղղիական եւ ամերիկեան կարեւոր գործարանաց մէջ պատ-
րաստեալ զանազան տեսակ երկաթեղէնք, ուռնական կախիկաղաղիք (առնա քիլի-
տի), հիւսան (տիւլկէր) գործիներ, եկեղեցական զանգակք, խարտոցք, գինիոյ
տոններ, գործարանաց վերաբերեալ մեքենայք, երկրագործական բազմազան
գործիներ, եւյլն, եւյլն, ամենքն ալ շատ աժան գիներով: Ընկերութեան մե-
քենագործն գիւրութիւններ կ'ընծայէ մեքենայից գործածութեան ուսման համար:

Կ. Պոլսէ եւ գաւառներէ ամէն ուղղակի յանձնարարութիւնք շուտ եւ կանո-
նաւոր կը կատարուին: Մեր քով չգտնուածներն ալ յանձնողչէքով կ'երրոպայէ բե-
րել կուտանք եւ ուզուած տեղերն ու նուազանգիստները կը փոխադրեմք:

Մեր վաճառատանց վարչութեան հասցէն է՝

Մ. Յ. ՄՈՒՐՏԱՆԵԱՆ ԵՂԲԱՐՑ

8—24

70, Եօրկանճըլար ճատտէսի, Ղալաթիա, Կ. Պոլիս

ԱՆԱՊԱԿ ԳԻՆԻ ԳԱՐԹԱԼԻ

ԽԱՎԵԱՐ — ԽԱՆ, ԹԻՒ 91

Վերջին ժամանակներս գինեչինութեան արդիւնաւորութեան վրայ յաճախ
կը գրուին տեղական ազգային եւ օտարազգի լրագրաց մէջ, եւ գոհութեամբ կը
չեչուին սոյն ձեռնարկին մասնագէտ համարուող Սուքիասեան Յակոբ Էֆէն-
տիի անունը, որ իւր երկարամեայ փորձառութեամբն՝ Գարթալի զանազան խա-
ղողներէ՝ ունեցած քննական եւ չրջակայից այգիներէն անձամբ կը պատրաստէ
ընտրելագոյն եւ անորատ գինիներ, որոց մէջն յատուկ գնահատութեան ար-
ժանի են՝ ԳԱՐԱ—ՉԱՎՈՒՇ, ՀՕՐԱ, ՀԱՃԻ—ՕՂԼՈՒ, ԲԷՉԻ—ՄԷՄԷՍԻ եւ ՆՈՒՐ-
ՆԻԿԵԱՐ խաղողներէն՝ սեւ գինի, ինչպէս նաեւ ՄԻՍԲԷԹ—ՉԱՎՈՒՇ, ԳԱՌԱ—ՉԱ-
ՎՈՒՇ, ՆՈՒՐՆԻԿԵԱՐ եւ ԳԱՐՈՒ—ՏԱՂԻ բոլորած խաղողներէն՝ ձերմակ եւ թէ ա-
նոյշ գինիներ, որք մայրաքաղաքիս առաջնակարգ բժշկաց կողմէ եւս կը յանձնա-
րարուին ամեն կարգի հիւանդաց: Կը ծախուին չիչով պատրաստ, նաեւ քա-
չով եւ տակառով: Յատկապէս յանձնարարելի են մեծածոխ սեղաններու եւ խրախ-
ճանաց հանգչներու ու չքանդակներու համար:

10—15